№ 99 ՀԻՆԳՇԱԲԹԻ 9 ՄԱՅԻՍԻ

1913

ՔԱՌԱՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՀԻՆԳՇԱԲԹԻ 9 ՄԱՅԻՍԻ № 99

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը և 7 ամսվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул. № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզւով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10—20 կոպ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՄՇԱԿ

Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".

TIFLIS, Rédaction du journal „MSCHAK".

ՄԱՅԻՍԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 7 ՌՈՒԲ.

Բաժանորդագրվել կարելի է իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ. ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ.

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.:

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торг. Дома Л. и Э. Метцль и К⁰, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

1913 թվի տարեկան բաժանորդները, որոնք առ 1-ն յունվարի 1914 թ. լրիւ վճարած կլինեն բաժանորդավճար 10 րուբլին, ձրիաբար կը ստանան հետեւեալ 2 գրքերը. 1) «Մշակ» եւ հայ կինը», 2) «Մշակի» քառասնամեակը»:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Ծանր և երկար հիւանդութիւնից յետոյ, ամսիս 7-ին, ցերեկվայ ժամը 1-ին վախճանվեց

Յովհաննէս Յարութիւնեան ԹԻՒՐՔՃԵԱՆԸ,

որի մասին յայտնում են իրանց ազգականներին և բարեկամներին վշտահար եղբայրները՝ Ստեփան և Մկրտիչ Յարութիւնեան Թիւրքճեանները, քոյրը՝ Մարիամ Յարութիւնեան Գազանճեան իր որդիներովը և մօրաքոյրը՝ Սրբուհի Յարութիւնեան Դաւթեանը: Ամփոփը կիրակի, ամսիս 12-ին, երեկոյեան ժամը 7-ին: Յուղարկաւորութիւնը երկուշաբթի, մայիսի 13-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից, Նիկոլաեվսկայա փողոց № 75, դէպի Կուկիայի կաթօլիկաց Պօղոս-Պետրոս եկեղեցին, ուր կատարվելու է հանդիսաւոր պատարագ: Պատարագիչն է հայ կաթօլիկների առաջնորդ կառավարիչ վերապատիւ Սարգիս վարդապետ Տէր-Աբրահամեանը: Թաղումը Կուկիայի կաթօլիկների գերեզմանատանը
(Կ.) 2—1

ՈՒՐԲԱԹ, մայիսի 10-ին, ցեր. ժամը 3-ին, Վէրայի «ՖԱՆՏԱԶԻԱ» այգում

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՃԱՇԿԵՐՈՅԹ

Ի ՊԱՏԻՒ ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ԴԵՐԱՍԱՆ ՅՈԲԵԼԵԱՐ
ԳԷՈՐԳ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ
Կը նուագէ սազանդար ՌԱԳՐԱՏԻ խումբը
ՎՃԱՐԸ 4 ՌՈՒԲԼԻ

Ցանկացողները այսօր, մինչև երեկոյեան ժամը 9-ը պէտք է վերցնեն ճաշկերոյթին մասնակցելու տոմս ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՍԱԼՈՆԻՑ, կամ ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔ. ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ մինչև ցերեկ. ժամը 2-ը: առ. 1—1

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան

ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

նշանակված է երեքշաբթի, մայիսի 14-ին, երեկոյեան ժամը 7½-ին Ընկ. դահլիճում (Արտա-Արամեան հրապարակ, № 7 ս. տ.).

ԶԲԱՂՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ.

1) Ընկ. կենտրոնի և ճիւղերի 1912 թ. հաշիւների և գործունէութեան քննութիւնը վերստուգիչ յանձնաժողովի զեկուցման հետ և այդ հաշիւների հաստատութիւնը:
2) Մի քանի ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը:
3) Ընտրութիւն 2 անդամի «Արղութեան-Նազարեան» գրական ֆոնդի յանձնաժողովի:
4) Ընտրութիւն ուսուցչական ֆոնդի յանձնաժողովի անդամների:
5) Խուդադեան որբանոցի վերակազման հարցը:
6) Ընտրութիւն խորհրդի 4 անդամի՝ հերթով հեռացող բժ. Մխիթարեանի, Ս. Լիսիցեանի և ինքնակամ հրաժարված Ներսէս եպիսկոպոսի և Զ. Մամուլեանի փոխարէն, 1 փոխ-անդամի, վերստուգիչ յանձնաժողովի 3 անդամի և 2 փոխ-անդամի:
7) Դահլիճի վերանորոգութեան հարցը:
8) Ընթացիկ հարցեր:

(Հ.Ե.) առ. 366. 3—1

Գիմնազիաների Խնամատար Ընկ. Կոմիտէտը

ՄԻԽԱՅԼՈՎՕ գիւղում, Թիֆլիսի նահ. Գորու գաւառ.

յայտարարում է, որ ընդունելութեան քննութիւնները Միխայլովօյի 6-դասեան Պրոգիմնազիայի առաջին երկու պատրաստական բաժանմունքներում և հիմնական հինգ դասարաններում, իրաւունքներով, տեղի կունենան

Մայիսի 15-ից մինչև 31-ը և օգոստոսի 20-ից մինչև 31-ը:

Խնդիրներն ընդունվում են Պրոգիմնազիայի Տնօրէնի կողմից՝ ամեն օր, առ. ժամը 9-ից մինչև ցեր. ժամը 2-ը, բացի տօն օրերից:

(Կ.) առ. 362. 2—1

Գ. ԳՕՐՆԻԳ Գոլովինեան պր. 11, զինուորա-պատմական մուզէումի մօտ:

Г. ГОРНИГЪ
ОПТИКЪ-СПЕЦІАЛИСТЪ
СУЩ. СЪ 1873 Г.
СПЕЦ.: ОКУЛИСТ ОПТИКА.
ЕДИНСТВ. НА КАВКАЗѢ
ШЛИФОВАЛЬНЯ
ОПТИЧЕСКИХЪ СТЕКОЛЪ
БИНОКЛИ
ДЛЯ ТЕАТРА, ПОЛЯ И МОРЯ
ВСѢХЪ ЛУЧШИХЪ СИСТЕМЪ
И ФАБРИКЪ.
Головинск пр 11 около военно-ист. музея.

Ակնոց, պենսնէ, լօրնէտ, բինօկլ—բոլոր ֆաբրիկներից:

(Կ.) առ.

По умѣреннымъ цѣнамъ
Новѣйшихъ изящныхъ рисунковъ.
✦ ПОЛНОМѢРНЫЕ ✦
ОБОИ
ФАБР. СКЛАДЪ
МАНГИКІАНА
ПУШКИНСКАЯ № 7.

(Հ. Կ.) 357. 50—2

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Գ. Յ. ԳԱՐԱԿԻՒԼԵԱՆ
(Նախկին օգնական Կամայեվի)
Վերադառնալով արտասահմանից վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը
Ամեն օր՝ առաւօտեան ժ. 9—1½-ը և երեկ. ժ. 4—7-ը
Վելեամինովսկայա փողոց № 4, բն. 3.
առ. (Օ.Մ.) 129. 50—32

ԿՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԵՒ ՎԻՐԱԲՈՒԺԱԿԱՆ
ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Ռտիշչէվսկայա 13, տելեֆօն 4—21.

Ընդունելութիւն թէ կանանց և թէ ներքին, նոյնպէս և վիրաբուժութեան կարիք ունեցող մնայուն (стаціонаръ) հիւանդների (բացի վարակիչ և հոգեկան հիւանդութիւններից), վաղօրօք գրվելու պայմանով:

Ընդունելութիւն կանանց, ներքին և մանկական խանգարումն ունեցող երեխեկ հիւանդների, ամեն օր՝ ցեր. ժամը 11-ից մինչև 12-ը:

Ընդունելութիւն պրոֆ. Մ. Ս. Սուբբոտինի կողմից վիրաբուժ. կարիք ունեցող հիւանդների, վաղօրօք գրվելու պայմանով, երկուշաբթի և հինգշաբթի օրերը ցեր. ժամը 1—2-ը:

Հիւանդանոցի բժիշկները
Ա. Ա. Յարութիւնեան, Ն. Ն. Վեսելովզորով, Վ. Ա. Զակրժէվսկի, Ի. Գ. Կալամկարեան, Ա. Ա. Նովիցկիյ, Գ. Ն. Տէր-Ներսէսեան, Ն. Զ. Ռամիկեան, Ա. Ր. Փիշէր, Ս. Փ. Շահպարոնեանց: Կոնսուլտանտ՝ պրոֆեսսոր Մ. Ս. Սուբբոտին:
(Ե.Կ.) առ. 779. 100—52

ԲԵՐԼԻՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Գ. ՄԷՀՐԱԲԵԱՆՑ
Ներքին հիւանդութիւններ՝ առանձնապէս կրծքի, ԹՈՔԱԽՏԻ և որովայնի: Բժշկութիւն նաև ՏՈՒԲԵՐԿՈՒԼԻՆՆԵՐՈՎ, ՌԱԴԻՈ պրեպարատներով և վիրաբուժական միջոցով՝ ՊՆԵՎՄՕՏՕՐԱՔՍՈՎ:
Ընդունելութիւնը ամեն օր, առաւօտեան ժամը 9—1-ը և երեկոյեան ժամը 5—8-ը:
Չքաւորներին առ. ժամը 9—10-ը ձրիաբար:
Սօլօլակ, Բէհբութեան փող. № 23 (անկիւն Դաւիդովսկայա): Հեռախօս 7—92.
(Ա.Օ.) առ. 92. 100—67

ԲԺԻՇԿ
Յ. Մելիք-Նուբարեան
ներքին և երեխաների հիւանդութիւնների առանձնապէս Թոքերի:
Թոքախտի բժշկումն տուբերկուլիններով և պնեվմատորակսով:
Ընդունելութիւնը ՆՈՐ ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Ամեն օր (առաւօտեան 12—1 ժ.
(երեկոյեան 5—7 ժ.
Սօլօլակ, Ռտիշչեվսկայա 10 (Լերմոնտովսկ. դեղատան դիմացը):
(Ե. Հ. Կ.) առ. 746. 100—90

ԲԺԻՇԿ
ԾՈՒԾԱՆԻԿ ՆԱԲԱԹԵԱՆ
Ընդունում է հիւանդներ կանանց և մանկաբարձութեան վերաբերեալ ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժամը 5—6-ը:
Հասցէն՝ Ռտիշչէվսկայա № 1.
առ. (Կ. Ե. Հ.) 4. 100—51

ԿՐԿՆՎՈՒՄ Է 1878-Ի ԴԷՊՔԸ

I

Վերջին ամիսները հայկական հարցը թւում էր թէ մտել էր մի այնպիսի նպաստաւոր հունի մէջ, որ ենթադրել էր տալիս մի իրական և վերջնական լուծումն:

Այդ հարցի ամենաէական, ամենակենսական կէտը, այն է՝ Հայաստանի մէջ մտցվելիք րէֆօրմները եւրոպական իրական կոնտրոլի ներքոյ դնելը, թւում էր անվիճելի և վճռականապէս ընդունված եւրոպական մեծ պետութիւնների կողմից:

Կը լուծվէր արդեօք հայկական հարցը իրագործմամբ Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, կը տրվէր արդեօք Թիւրքահայաստանին լայն թէ սահմանափակ ինքնավարութիւն, կը ստեղծվէր արդեօք հայկական մի ինքնուրոյն իշխանութիւն, կը տրվէր արդեօք նրան միայն 1895 թւի մայիսեան օրինագիծը—այդ միևնոյն է. կարևորը և էականը այն էր, որ այդ ամենը պէտք է իրագործվէր եւրոպական կոնտրոլի հսկողութեան ներքոյ և կամ պէտք է իրագործվէր եւրոպացիների ձեռքով, կամ րէֆօրմների գործադրութիւնը պէտք է յանձնվէր եւրոպական պետութիւնների մէջ ամենից շատ յարմարութիւն ունեցող կամ որակեալ պետութեան, որ, անշուշտ, կարող է լինել միայն Ռուսաստանը, իբրև սահմանակից պետութիւն:

Վերջապէս՝ թւում էր, թէ այս կամ այն եղանակով Թիւրքիայի բազմաչարչար, տանջեալ և նահատակ հայ ժողովուրդը շուտով պէտք է գտնէ իր ազատագրութիւնը, իր փրկութիւնը, որն է իր անտանելի ցաւերի և վէրքերի բուժումը, իր վշտերի ամոքումը:

Մենք գտնվում էինք ճիշդ այն նշանաւոր դէպքի նախօրեակին, որ կոչվում է Սան-Ստեֆանոյի դէպք, Սան-Ստեֆանոյի դաշնագիր, որի 16-րդ յօդուածի զօրութեամբ հայ ազգը պէտք է ազատվէր թիւրքական անտանելի լծից շնորհիւ ռուսաց Ազատարար Ալեքսանդր II Կայսրի մարդասիրութեան: Այդ դաշնագրի զօրութեամբ Հայաստանում պէտք է մտցվէին րէֆօրմներ Ռուսաստանի երաշխաւորութեամբ և կոնտրոլի ներքոյ:

Բայց յանկարծ միջամտեց Անգլիան, և ամեն բան յեղաշրջվեց: Անգլիան 1878-ին արգելք եղաւ Ռուսաստանին իրագործել րէֆօրմները, այլև, փոխելով Սան-Ստեֆանոյի 16-րդ յօդուածը և վերածելով նրան Բեռլինի դաշնագրի 61-րդ յօդուածի, նա րէֆօրմների իրագործումը հանեց ոչ միայն Ռուսաստանի, այլ և եւրոպական մեծ պետութիւնների կոնտրոլից: Բացի դրանից, նա կնքեց մի առանձին դաշնագիր Թիւրքիայի հետ, որ յայտնի է «Կիպրոսի դաշնագիր» անունով, որի զօրութեամբ Թիւրքիան պարտաւորվել է րէֆօրմներ մտցնել Հայաստանում, իսկ Անգլիան երաշխաւորել է Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը և ամբողջութիւնը: Այդ երկու դաշնագրերով—Բեռլինի և Կիպրոսի—Թիւրքիան ազատեց իրան այն ամենամեծ վտանգից, որ նա համարում էր իրա համար բացառնալից, այն է՝ Եւրոպայի իրական կոնտրոլից՝ րէֆօրմներ մտցնելու գործում: Եւ դրա համար նա զոհեց Կիպրոս կղզին, պատրաստ էր զոհել նոյն իսկ տասը Կիպրոս:

Ազատվելով Եւրոպայի իրական կոնտրոլից շնորհիւ Գերմանիայի և գլխաւորապէս Անգլիայի, Թիւրքիան, ինչպէս գիտենք, ամբողջ 35 տարի ոչ միայն որևէ րէֆօրմ չը մտցրեց, այլ և յղացաւ հայերին ջնջելու ծրագիրը՝ մասսայական, առանձնակի կոտորածների, ջարդերի և զանազան կեղեքումների միջոցով. մի ծրագիր, որ նա ամենամեծ ցինիզմով իրագործեց սիստեմատիկաբար, եւրոպական մեծ պետութիւնների աչքի առաջ, և որի հետևանքն այն եղաւ, որ հայկական 6 վիլայէթներում պրեզ 3 միլիոն հայերի թիւը այսօր իջաւ 1½ միլիոնի և երկիրը ենթարկվեց կատարեալ քայքայման ու ամայացման:

Եթէ 1878 թւին Անգլիան խոչընդոտներ չը ստեղծէր Ռուսաստանի առաջ, և ռուսական զօրքերը մնային Հայաստանում մինչև րէֆօրմների իրագործումը, այսօր, անտարակոյս, Թիւրքահայաստանը մի բարեկարգ երկիր կը լինէր և ինքը Թիւրքիան ևս ուժեղացած:

Անգլիան 1878 թւին գործեց մի մեծ ոճրագործութիւն մարդկային իրաւունքների դէմ, որովհետև նա պատճառ դարձաւ մարդկային այն սոսկալի հեկատոմբներին, որոնք պատմութեան մէջ յայտնի են «Հայկական ջարդեր» անունով:

Անցաւ 35 տարի: Ռուսաստանը նորից հանդէս եկաւ՝ իր ազատարար միսսիան կատարելու, փրկելու մի ամենահին քրիստոնեայ ազգի վերջին բեկորները:

Այս անգամ՝ թւում էր թէ Անգլիան ոչ միայն խոչընդոտներ չէ պէտք է յարուցանէ, այլ և աջակցէ Ռուսաստանին այդ մարդասիրական և վեհ միսսիայի մէջ: Թւում էր, թէ Անգլիան զղջացել է իր գործած պատմական մեծ սխալի համար: Գոնէ անգլիական արտաքին քաղաքականութեան ղեկավար սըր Էդուարդ Գրեյ հրապարակօրէն ասել էր մի քանի ամիս առաջ հայկական պատգամաւորութեան՝ հետևեալ նշանաւոր խօսքերը. «Երբ 1878 թւին Ռուսաստանը կամեցաւ փրկել Հայաստանը, Անգլիան ընդդիմացաւ. հաւատացած եղէք, որ այժմ Անգլիան այլ ևս դիմադրութիւն չի ցոյց տայ Ռուսաստանին»:

Եւ, սակայն, նոր համաձայնութիւնը, որ Անգլիան կնքել է այժմ Թիւրքիայի հետ, գալիս է ցոյց տալու, թէ, ուա՞ղ կրկնվում է ստէրէօտիպ կերպով 1878 թւի ցաւալի դէպքը: Անգլիան կնքել է Թիւրքիայի հետ մի նոր Կիպրոսի դաշնագիր, որով ամբողջ 40 տարի երաշխաւորում է Թիւրքիայի անձեռնմխելիութիւնը կամ, ուրիշ խօսքերով, արգելում է միջամտութիւնը եւրոպական պետութիւնների՝ Թիւրքիայի ներքին գործերի մէջ, թողնելով րէֆօրմների իրագործումը Հայաստանի մէջ իրան՝ Թիւրքական կառավարութեան բարեհայեցողութեան:

Եւ, իբրև վարձատրութիւն, այս անգամ Անգլիան ստանում է Կօվէյտը, ինչպէս 1878-ին ստացաւ Կիպրոսը:

Անգլօ-թիւրքական համաձայնութիւնը առաջ է բերել և անգլօ-գերմանական կամ անգլօ-գերմանօ-թիւրքական համաձայնութեան անհրաժեշտութիւնը Փոքր-Ասիայի վերաբերմամբ, որով Անգլիան և Գերմանիան դարձեալ, ինչպէս 1878 թւին, պաշտպան պէտք է հանդիսանան Թիւրքիային ընդդէմ Ռուսաստանի:

Այսպիսի հանգամանքների մէջ, անկասկած, հայկական հարցի լուծումը նորանոր դժուարութիւնների է հանդիպում:

Հ. Առաքելեան

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ԼՈՒՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Երէկ, Կարապետեանի վրայով, ստացվեց հետևեալ հեռագիրը.

Կոնիում գրգռում է տիրում հայերի դէմ, Ամգոմէյս հայ գիւղում գտնված վաճառական Մամէդ-Եամինի գլխի պատճառով, չը նայելով սպանվածի եղբօր յայտարարութեան, թէ սպանութեան մէջ մեղադրվում է Թիւրք Խալիլը, որ հանգուցեալի հետ հաշիւ ունէր: Կալանաւորված հայերից 3-ը նստած են ժանդարմի սպանութեան մեղադրանքով:

Շաբաթ օր Երզնկա հասաւ Օլգենինը. Նրա վրա սաստիկ հսկողութիւն կայ:

Վանի վիլայէթում շարունակվում են անկարգութիւնները: Ռիզանում սպանվել են 2 հայեր: Սասնում ծանր վիրաւորված է Իսոն: Քեօչանիս գիւղում վախճանվեց Մուկսա Աղասին, բանտարկված գինւորներից:

Քիւրդերի շարժումը սպառնական չափեր է ընդունում: Վան են գնում Իթթիհադի պատուիրակները:

Ստեփանեան

Անգլօ-գերմանական բանակցութիւնները Ասիական Թիւրքիան ազդեցութեան շրջանների բաժանելու մասին՝ աւարտվել են. Անգլիան և Գերմանիան համաձայնեցին հովանաւորել Թիւրքիային և պաշտպանել նրա անկախութիւնն ու ամբողջութիւնը: Անգլիական ազդեցութեան շրջանի մէջ մտնում են Արաբիան, Պարսկական ծոցը, Սիրիան. գերմանական շրջանի մէջ մտնում են՝ Փոքր Ասիան և Միջագետքը: Անգլիան ընդ սմին պէտք է Ֆրանսիայի հետ բաժանէ իր ազդեցութիւնը Սիրիայում, իսկ Գերմանիան՝ Ռուսաստանի հետ Փոքր Ասիայում:

Երիտասարդ Թիւրքերը Կ. Պօլսից Քիւրդստան ուղարկեցին հին ռէժիմի յայտնի պաշտօնեայ Աբդիւլ-Կադիրին՝ յանձնարարելով նրան զսպել քիւրդերին բռնութիւններ գործ դնելու հայերի վրայ, որպէս զի Եւրոպան չը միջամտէ Փոքր Ասիայի գործերին: Դրա հետ միասին երիտասարդ Թիւրքերի կաբինէտը վճռել է մերժել հայերի պահանջը այն մասին, որ եւրոպական վերահսկողութիւն սահմանվի Հայաստանում բարենորոգումների գործադրութեան վրայ: Ապա, կոմիտէտը համաձայնում է միայն գործադրել այն բարենորոգումները, որոնք Հայաստանին աւտոնոմիա տալուց շատ հեռու են:

ԴՐՈՒԹԻՒՆԸ ԹԻՒՐՔԻԱՅԻ ՀԱՅԱԲՆԱԿ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ

Դիարբէքիր, 23 ապրիլի

Բէշէրիկի շրջականերում (Սիլվան) քիւրդերը զինվում են շտապով: Իրար յաջորդող սպանութիւնների, կողոպուտների և խռովութիւնների ներկայութիւնը ժողովրդի կեանքը վտանգի մէջ են դնում: Տեղական իշխանութեան գործ դրած միջոցները անբաւարար են ջնջելու վտանգը: Խնդրում ենք դիմել անմիջական միջոցների:

Բղի, 23 ապրիլի

Շահ-Հիւսէյին-բէյ, որ նստած է Ալթօնի գիւղի մէջ, արգելել է գարնան սերմանցումը: Նա բերել է տալիս գիւղը ժանդարմներ, որպէսզի թոյլ չը տայ և սերմանցումը:

Մուշ, 20 ապրիլի

Անցեալ օր քիւրդերը յափշտակեցին Սօլ գիւղի 4 ձին և սպանեցին Եսայու որդուն և խլեցին նրա ձիերը:

Սէլիմ-բէյ, Սամոնեց, և իր աջակիցները պաշարեցին Ախոյի հայ գիւղը և մահացու կերպով վիրաւորեցին Տիգրանին կացնի հարուածներով: Ժողովուրդը սարսափի մէջ է, տեսնելով որ ոճրագործութիւնները վերսկսվել են գարնան գալով:

Մուշ, 21 ապրիլ

Դրութիւնը շարունակում է աղէտալի լինել։

Այսօր, Խասրով էֆ. Աղայեանը, հարկահաւաք, վիրաւորվեց հրացանի մի հարուածով Հարնօջի գիւղի աղայի տանը, ուրիշ հարկահաւաքների և ժանդարմների ներկայութեամբ։

Քիւրդերը արգելեցին Հուէթի հայերին սերմել հողերը։

—

Մուշ, 24 ապրիլ

Խասրով էֆէնդին, որ վիրաւորվել էր քիւրդերի ձեռքով, մեռաւ։

—

Բղի, 21 ապրիլ

Մի քանի օր առաջ Հասան-օղլու Հէլն հրկիզեց Սողաձորի գիւղացի Ցովակիմի ջրաղացը։

Հակառակ մեր դիմումներին կառավարութեան մօտ, ոճրագործը չը կալանաւորվեց։ Երէկ, վերջինս, համամիտ Մուհամմէդի հետ, սպանեց վերոյիշեալ Ցովակիմին։

Ոճրագործութիւնները իրար են յաջորդում։

Ժողովուրդը տէրրօրի մէջ է։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵ՛ԷՆ

—

Կ. Պօլիս, 25 ապրիլ

Անցեալ Թղթակցութեանս մէջ մի առ մի դասաւորած էի արդէն բոլոր այն դէպքերը, որոնք Հայաստանի և Կիլիկիոյ անսովոր ու ծանրակշիռ կացութեան հետևանօք կեդրոնին մէջ տեղի ունեցան, բոլոր կուսակցութեանց համերաշխ գործակցութեամբը։

Թղթակցութիւնս վերջացուցած էի, որքան կը կարծեմ, ազգային ժողովի յետաձգման վարչական անօրէնութիւնը ծանուցանելով և յայտնելով, թէ կը մտածուի փոխանակ ուրբաթի՝ կիրակի օր նիստ գումարել։

Արդարև՝ ազգային ժողովի յետաձգումը կատարուած էր վարչութեան մի քանի անդամներուն և Արշարունի պատրիարքին մեղսակցութեամբը, ռուս դեսպանին և յունաց պատրիարքին այցելութիւնը պատրուակելով։ Սակայն որովհետև ազգ. ժողովի խմբակցութեանց ներկայացուցիչները նոյն առտուան համար արդէն որոշած էին նիստ գումարել, անոնք կատարեցին իրենց գումարումը, և հոս Հայկ էֆ. Խօճասարեան ազգային ժողովի արժանապատուութեան և հեղինակութեան դէմ վիրաւորանք մը համարելով հրաւիրագիրները ստորագրուած ժողովի մը այսպէս անպաշտօն կերպով ուրանց կողմէ յետաձգումը՝ պնդեց կիրակի օր արտասովոր ու բացառիկ նիստ մը գումարելու պէտքին վրայ։ Ազգ. ժողովի ներկայացուցիչները համամիտ եղան, և որոշուեցաւ անմիջապէս պաշտօնագիր մը խմբագրելով և նոյն պահուն գումարուող քաղ. ժողովին ներկայացնելով՝ պահանջել ազգային ժողովին գումարումը, կիրակի օրը, իսկ եթէ սրբազան պատրիարքը չհաւանի, ատենապետին պատասխանատուութեան տակ ժողովին գումարումը որոշուած ըլլալը յայտնեցին։ Այն պարագային պատրիարքին և վարչութեան տապալումը անխուսափելի պիտի ըլլար։

Քաղ. ժողովը շուտով տեղի տուաւ։ Ազգ. ժողովի դիւանը անմիջապէս փութաց այն ատեն Կում-Գափու, ուր կը գտնուէր պատրիարքը, յունաց պատրիարքը ընդունելու համար, և հաղորդեց ժողովին որոշումը։ Պատրիարքը, որ արդէն պատասխանատուութիւն մը չունէր ժողովին գումարման յետաձգման մէջ, հաւանեցաւ։

Այսպէս՝ կիրակի օրուան արտասովոր և աննախընթաց նիստին որոշումը տրուեցաւ։ Վարչութեան դիրքին գալով, այս մասին ալ երկար բանակցութիւններ եղան ուրբաթ օրուան գումարման մէջ։

Խմբակցութեանց ներկայացուցիչները ի վերջոյ յարմար տեսան ապահովել վարչութիւնը, թէ զինքը պիտի պահեն իր պաշտօնին վրայ և զինքը տապալելու ոեւէ խորհուրդ կամ մտադրութիւն չկայ։ Ընդհակառակը իր դիմումներուն ոյժ տալու և անոր դիրքը կառավարութեան առջև զօրացնելու համար ազգային ժողովին կողմէ վստահութիւն յայտնելու որոշում տրուեցաւ։

Վարչութիւնը, որ մտատանջ կը թուէր իր դիրքին համար, այս կերպով ապահովուեցաւ, սակայն իր ստացած այս ապահովութիւնը անպայման չէր, այլ պայմանաւորեալ։ Վարչութիւնը ինքն ալ իր կարգին խորհրդարանական յանձնաժողովի մը կօնտրօլին տակ մտնելու յանձնառութիւնը կուտար, ինչ որ նշանակելի զիջում մըն էր, քանի որ ասկէ առաջ նոյն այդ վարչութիւնն էր, որ ըմբոստացած էր ազգ. ժողովին դէմ, անոր կարգած այս տեսակ մէկ յանձնաժողովը լուծելով և անոր գոյութեան իրաւունք զլանալով։

Այս իրաւախոհութիւնը առաջ եկաւ գլխաւորաբար ազգային մեծ խնդրոյն շուրջ ստեղծուած գեղեցիկ իրաւախոհութեան և միաբանութեան շնորհիւ, որ իր օգտակար կողմը ունեցաւ նոյնիսկ այս օրերս, ահագին ու պատասխանատու սխալի մըն ալ առաջքն առնելով։

Միջանկեալ կերպով թերևս աւելորդ չըլլայ բացատրել այդ քայլը, որ վարչութեան առնելու Թոյլ չտուին խմբակցութեանց ներկայացուցիչները։

Ինչպէս արդէն քանիցս շեշտուեցաւ, Հայաստանի բարենորոգմանց խնդրոյն լուծումը Թիւրքիոյ Թուղթի վրայ տուած խոստումները չեն, այլ անոնց լուրջ երաշխաւորութիւնը եւրոպական կօնտրօլի տակ։ Ասկէ դուրս ամէն կարգադրութեան խաբուսիկ ըլլալուն ամէն մարդ համոզուած է և, ինչպէս կը յիշուի, այս մասին իր կարծիքը յայտնելու նոյն իսկ չէր վարանած Թիւրքահայոց ազգ. վարչութիւնը իր ատենապետին բերանով, ազգ. ժողովի բեմէն, երբ բարենորոգմանց հարցը հերթական դարձաւ։

Այս մտայնութիւնը բոլոր Թիւրքիոյ մէջ ապրողներուն համար ընդհանրական է և տարբեր մտածութիւն մը, շահախնդրութենէն տարբեր շարժառիթ մը չի կրնար ունենալ։

Արդ, ինչպէս անուղղակի աղբիւրներէ կը տեղեկացուի, հիմա Եւրոպայի դիւանագիտական աշխարհին մէջ, կըսուի թէ, խնդրոյ առարկայ եղած են նաև Սուրիոյ և Հայաստանի հարցերը, որոնց լուծում մը տալ կը մտածուի։

Մասնաւորապէս ինչ-ինչ նշաններ կան, թէ Արևելք. քրիստոնեայ ազգերու հովանաւորը՝ Ռուսիա լրջօրէն ձեռք առած է իրեն սահմանակից երկիրներու մէջ բարւոք վարչութիւն մը հաստատելու հարցը։

Այս նպաստաւոր առիթը, որ հայոց կը ներկայանայ, անշուշտ նոր սխալներով վիժեցնել ոճիր մը պիտի ըլլար։

Պէտք է միշտ աչքի առջև ունենալ, թէ մեր բարեկամը Թշնամիներէն չկարենալ զանազանելնուս համար է որ շարունակ 30 տարի տուժեցինք, և այսօր ոչ ոքի համար գաղտնիք է, թէ ինչպէս և ով վրիպեցուց զմեզ։

Ազգ. կեդր. վարչութիւնը, որ հայկական խնդրոյն հին Թղթածրարները ունի իր աչքին առջև, անշուշտ ուրիշներուն տեղեկատուութեան պէտք չունի, համոզուելու համար, թէ Ներսէս պատրիարք ինչպէս Բերլինի մէջ քանդեց այն շէնքը, որ Այ-Ստեփանոսի մէջ այնքան գեղեցիկ կառուցած էր։

Այդ սխալը հիմա կրկնել ներելի չէ։ Ասով հանդերձ՝ կըսուի, թէ անցեալ մէկ երկու օրերուն մէջ մէկը, որ կամ շահախնդիր մըն է և կամ կարճամիտ մը, ազգ. վարչութեան մօտ վրիպեցնող դեր մը կատարելու նկրտած է, ռուս կառավարութեան ներկայացուած ծրագիր մը յետս կոչելու համար ջանքեր ընելով, վստահելով Թիւրք կառավարութեան մէկ ծրագրին, որ կը խոստանար Հայաստանի վարչութիւնը երեք Թիւրքէ, երեք հայէ և երեք անգլիացիէ բաղկացած յանձնաժողովի տրամադրութեան տակ դնել։

Ասանկ աղէտալի ու - հարկ է ըսել - ազգային շահերուն դէմ դաւաճանական քայլ մը բարեբաղդաբար առնելէ արգիլուեցաւ վարչութիւնը շնորհիւ մասնաւորապէս Շահրիկեանի և Խօճասարեանի և ընդհանրապէս ազգ. ժողովի ամէն հոսանքներու ներկայացուցիչներուն։

Ասոնք, երբ ազգին ամէն հոսանքներուն արտայայտիչն ու անոնց կարծիքներուն Թարգմանը, արգիլեցին վարչութիւնը այդպիսի անխոհեմ քայլ մը առնելէ, սպառնալով զինքը տապալել, եթէ ազգին ընդհանուր կարծիքին և համոզումներուն հակառակ այդ տեսակ քայլ մը առնէ։

Միայն այս վճռական քայլը արդէն բաւական էր արժեցնելու խորհրդարանական յանձնաժողովի մը գոյութիւնը, որուն հաւանեցաւ վարչութիւնը։

Կիրակի օր գումարուեցաւ ազգ. ժողովը, երեսփոխաններու ստուար մեծամասնութեան ներկայութեամբ։ Ժողովէն առաջ դարձեալ վարչութիւնը և խմբակցութեանց ներկայացուցիչները նիստ գումարեցին առանձին առանձին և համաձայնեցան բանաձևի մը մասին։

Ժողովը բացարձակ դռնփակ եղաւ և նոյն իսկ ստուար Թղթակիցներ, ընդ որս նաև այս տողերը գրողը, դուրսը հարկադրուեցան սպասել մինչև ժողովին աւարտումը, որ շատ ուշ ատեն եղաւ։

Առնուած կիսկատար տեղեկութիւններէն կը հասկցուի, թէ վարչութեան կողմէ նախ խօսած է ատենապետ Ստեփան Գարայեան, որ կացութիւնը իր բոլոր դառնութեամբ և ծանրութեամբ ներկայացուցած է, և վարչութեան միջոցներու սպառած ըլլալն ու կառավարական պաշտօնեաներու որքան քիչ հայոց ցաւերը իրենց սրտին մօտ ընդունելու տրամադիր ըլլալը պարզած է։

Մասնաւորապէս Կիլիկիոյ եղերքը զէնք հանելու զրոյցին և Երզնկայի բօմբաններուն պայթման Թիւրք մտայնութեան մէջ առաջ բերած ցաւալի ազդեցութիւնը պարզած է և անոր մէկ արտայայտութիւնը սեպած է ներքին գործոց մինիստրին հայ պատուիրակութիւնը իր ներկայութեան չընդունիլը։ Վարչութեան ներկայացուցիչը ի վերջոյ տեղեկացուցած է, թէ իրենք այլևս պատասխանատուութիւն չեն ստանձներ և ազգ. ժողովին կը Թողուն իր յարմար տեսած միջոցները ձեռք առնել։ Մանկունի եպ. եկեղեցականաց, Ցար. Շահրիկեան՝ դաշնակցականաց, Դաւիթ Տէր-Մովսէսեան՝ կեդրոնին և Վահան Թէքէեան՝ սահ.-ռամկավարներու կողմէ հետզհետէ խօսք առնելով առաջարկեցին մերժել վարչութեան հրաժարականը՝ ընդունելով հանդերձ անոնց մէջ բերած պատճառաբանութեանց իրաւացիութիւնը և կացութեան ծանրութիւնը։ Կառաջարկէին նաև վստահութեան քուէ, և իր դիմումները շարունակելու խրախոյս, ինչպէս նաև անոր դիրքը զօրացնելու համար խորհրդարանական յանձնախումբի մը ընտրութիւնը իբր օժանդակ մարմին։

Միւս առաջարկներու մասին ոեւէ կարծեաց աններդաշնակութիւն առաջ չէ եկած, սակայն ոմանք բուռն կերպով ընդդիմացած են յանձնախումբին կազմութեան, իբր վարչութիւնը տկարացնող։ Ի վերջոյ ընդհանուր համաձայնութեամբ ընդունուած է Զօհրապի կողմէ ներկայացուած բանաձև մը։

Ցետոյ կատարուած է հինգ հոգիէ բաղկացած յանձնախումբին ընտրութիւնը։

⁂

Ազգ. ժողովին գումարումէն յետոյ, նոյն իսկ յաջորդ օրը, յանձնախումբը սկսաւ իր պաշտօնին և ժողով կազմեց։ Սակայն տակաւին ոեւէ գործնական քայլ չէ առնուած։

Կըսուի, թէ յիշատակագիր մը կը կազմուի Մահմուդ Շէվքէթ փաշայի մատուցանելու համար։ Շաւայլ

ԽԱԲՐԻԿՆԵՐ ԲԱՐՁՐ ՀԱՅՔԻՑ

Էրզրում, 2 մայիսի

Ամէն օր հեռագիրը մեզ լուրեր է բերում Ստամբոլից հայկական նահանգների բարենորոգման մասին։ Թիւրքական խոստումներ, որոնք իրանց չը գործադրվելու յատկութիւնը վաղուց փաստացի կերպով հաստատել են 70 տարիների ընթացքում։

Ստամբոլի փաշաները կարծէք օրօր են առում մեզ այդ խոստումներով։ Սին յոյսերով մեր շրթունքներն են քաղցրացնում առժամանակեայ կերպով, մինչև անցնի վտանգը, իսկ դրանից յետոյ նրանք շատ լաւ գիտեն պլպլացող լեզուներն արհամարհանօք անելու ձևը։ Այժմ նեղն են ընկել ու լայն-լայն խոստանում և այլն. բայց հէնց որ իրանք իրանց վրա գտան, շատ աւելի լաւ կերպով իմանում են կոտրածները սարքել։ Ոչ հայերը և ոչ էլ Թիւրքերի գիտակից մասը չեն հաւատում բարենորոգումների խոստումներին։

Ահա նահանգային նոր օրէնագիծը, որպէս թէ ռէֆորմատորական շունչով խմբագրված։ Մահմուդ Շէֆքէթի կաբինետը աւելի պարզ և աւելի տափակ բան չէր կարող հրամցնել մեզ որպէս ռէֆորմ, քան այդ Թափթփուք, ճռռմաբան, անգոյն և ըստ ինքեան ոչ մի ռէֆորմ չը պարունակող օրէնագիծը։ Որպէս թէ ապակենտրոնացման պահանջներին բաւարարութիւն են տուել, բայց իրապէս ստեղծել են այնպիսի մի վիճակ, որը աւելի վատթար պիտի լինի, քան ներկայ դրութիւնը։ Այդ օրէնագիծը, «ապակենտրոնացումի» վրա հիմնված, աշխատել է ամէն իշխանութիւն յանձնել նահանգի կալուածատէրերի, հարուստների և վերջապէս խոշոր ցեղ ունեցողների ձեռքում։ Բուն դեմօկրատիան անտես է առնվել։ Այդ ռէֆորմները խմբագրել ու գործադրութեան են դրել կէս դիւժին փաշաներ՝ առանց պարլամենտի հաւանութեան ներկայացնելու։

Ճշմարտութիւնն այն է, որ Թիւրքական բոլոր ռէֆորմները, խոստումները առհասարակ ժողովրդի մէջ ծիծաղ ու հեգնանք են առաջացնում։ Չը կայ վստահութիւն։ Քաղաքումս օրէ-օր բազմանում են ռուսերէն սովորողները, գլխաւորաբար առևտրականներից, որոնց ցանկութիւնն է ձեռնարկել ռուսական արդիւնաբերութեան ներմուծմանը։

Ռուսահպատակ Գր. Միրզոյեանը դիմեց կառավարութեան, խնդրելով արտօնել իրան բաց անելու ռուսական վարժարան պրօգիմնազիայի ծրագրով, բայց կառավարութիւնը Թոյլ չը տուեց, առարկելով չնչին պատճառներ ու գաղտնի կերպով էլ յարուցանելով խոչընդոտներ։ Ռուս գեներալ-կօնսուլ Ադամօվը միջնորդել է ու դիմել Պօլիս՝ դեսպանատուն։ Քուրմ

ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

—

Վան, 23 ապրիլ

Մի-երկու շաբաթ առաջ քաղաքիս բոլոր հայ զինավաճառների կրպակները անակնկալ կերպով խուզարկվեցին և գրաւվեցին գտնված բոլոր զէնքերը՝ Թէկուզ ոչ արգելեալ, պատճառաբանելով թէ նրանք զէնք ծախելու արտօնագիր չեն ստացել, մինչ նրանք անխտրաբար վաճառում էին թէ հայերի և թէ Թիւրքերի վրա. իսկ օրէնքի այս տրամադրութիւնը ցոյց չը տրվեց Թիւրք զինավաճառների նկատմամբ, որոնք նոյնպէս արտօնագիր չեն ստացել։

Սարայ գաւառակում ամսիս 14-ի գիշերը չորս զինված քիւրդեր մտան սարի Գինօ գիւղապետի տունը և նրան ծանր կերպով վիրաւորեցին. յոյս չը կայ որ վիրաւորն ապրի։ Ոճրագործները տեղական կառավարութեան ծառայողներիցն են և կալանաւորվել են ու գտնվում են բանտում։

Գարնան բացվելուն հետ միասին լուրջ կասկածները ծայր են տուել քրէական խլրտումների ու քաղաքական շարժումների վերաբերմամբ։ Ցայտնի է, որ կառավարութեան Թելադրութեամբ քիւրդական ինքնօրինութեան մի հարց է առաջ եկել՝ որպէս հակադրութիւն հայկական հարցի։ Թիւրք կառավարողներն այդ հարցը առաջ բերելով ուզում են չէզոքացնել հայկական հարցը։ Քիւրդական շրջաններում պրօպագանդա ու կազմակերպութիւններ են լինում։ Պարսկաստանում քիւրդ Սմկօն խոշոր գումարների պահանջներ է դրել այս կողմի քիւրդ ցեղապետներին, ամէն մէկից պահանջելով 200-ից մինչև 500 ոսկի. Նոյնիսկ Բաշկալէի մի հարուստ հրէայից էլ նոյն չափ մի մեծ գումար է պահանջել։ Աբդիլ-Րիզակ Բէգըր-խան-զադէն ու յայտնի շէյխ Սայիդ Ալին Խիզանում ու Սղերդում զինված քիւրդեր են համախմբում։ Շէյխ Սայիդ Թահան դեռ Պարսկաստանումն է մնում և չի ուզում վերադառնալ Շեմդինան՝ հակառակ Թիւրք կառավարութեան յայտարարած ամնիստիային ու մի քանի անգամ ուղղած հրաւէրներին և ուղարկած հրաւիրակներին. սրա ու Սմկօյի մօտ մնում են նոյնպէս աւազակ Միր-Մհէն ու Սայիդը, որոնք ապացոյցներ են քաղաքական հօրիզօնը մռայլված լինելուն ու մօտիկ պատահականութիւնների ու կնճռոտութիւնների երևան գալուն, գուցէ նոյնիսկ նախճիրների Թիւրքահայաստանում։ Մարակ

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՏԱՐՕՆԷՆ

—

Մուշ, 9 ապրիլ

Երէկ Մուշի շուկայի հրապարակին վրայ Թիւրք զինուոր մը չարաչար կերպով ծեծեց ձուավաճառ գիւղացի հայ կին մը բազմաթիւ հասարակութեան ներկայութեամբ։ Շատ հայեր ականատես էին այդ քստմնելի դէպքին ու չկրցան խօսիլ և երես շուռ տալէն չտեսնել ձևացնելով։

Խեղճ կինը՝ վախէն՝ չհամարձակեցաւ նոյնիսկ լալու կամ բողոքի ժեստ մը ընելու, չնայելով որ զինուորը կատաղօրէն կը հայհոյէր թէ պատիւ և թէ կրօն։

Շրջանիս հայութեան սրտագին փափագն այն է, որ մեր դիպլօմատները քիչ մըն ալ մեր դրութեան մէջ մտնեն, թէ մենք այս կեանքը չենք կրնար քաշել տալ, հետևաբար իրենց աշխատանքի շուկէտը պէտք է ըլլայ մեկին և պարզ, այն է՝ վերցնել մեր և Կովկասի միջև գոյութիւն ունեցող այժմեան սահմանը։

Առ այժմ մեր գոյութիւնն իսկ ձանձրալի և Թէական է. մեր կացութեան չորս ծայրը, ինչպէս կըսեն, ինկած է ջուրը, և կը նմանինք նաւաբեկութենէն ազատած մարդու մը, որ միայն կրթնած կտոր մը տախտակի վրայ՝ կը տարուբերի փոթորկոտ ալեաց մէջ։

Քաղաքական մթնոլորտէն աւելի անորոշ և խառնակ դրութեան մէջ կը գտնուին նաև ազգային գործերը։ Օրուան հրատապ խնդիրներէն մին է Պօղօսեան վարժարանի շինութիւնը։ Որ այս 2—3 տարուան մէջ բաւական ծանր վիճաբանութեանց և մի քանի անգամ մկրատութեանց ատաղձը Թաթխուելէն և ձգձգուելէն յետոյ՝ վճռուած էր այդ շէնքը կառուցանել ս. Կարապետի վանքի մէջ և անոր հովանաւորութեան ու աջակցութեան տակ։ Եւ ահա այժմ այդ խնդիրը կը գտնուի աւելի քան վիժման ճամբուն վրայ։ Այս անգամ լաւատեղեակ աղբիւրէ կը լսենք, որ այդ շինութեան խնդիրը պիտի վիժէ շնորհիւ ս. Կարապետի վանհ. փոխանորդ Վարդան վրդ. Ցակոբեանի, որ հակառակ նախկին որոշման և համաձայնութեան՝ այժմ կը պատասխանէ Պօղօսեան շինութեան յանձնաժողովին, թէ «մենք ժամանակ չունինք զբաղելու Պօղօսեանով, մենք վճռած ենք այս տարի մեր եկեղեցին և ուխտաւորաց քանի մը սենեակները վերանորոգել... մենք ինչ պիտի ընենք Պօղօսեանը... մեր դպրոցին հետ, խարխլած շէնքը բաւական է մեզ»։

Ի նկատի ունեցէք, որ Վարդան վրդ.-ի ըսածը անդառնալի պատգամ է մեր երկրի մէջ։ Արդ՝ հարց է, թէ արդեօք Պօղօսեանի յանձնաժողովը, իր սրբազան առաջնորդին հետ, քաջութիւն պիտի ունենա՞յ քանդելու Վարդան վ.-ի վճիռը և կամ պիտի կրնա՞յ արդեօք բարեբարի և Վեհ. Կաթողիկոսի Թոյլտուութիւնը շուտով ձեռք բերել, որ այդ դպրոցական շինութիւնը փոխանակ ս. Կարապետի վանքի շրջափակին մէջ կառուցուելու՝ Մուշի մօտերը շինուի, որ, ի հարկէ, պիտի պահանջէ խոշոր բիւջէ մը՝ կարենալ գէթ 100—120 աշակերտով միջնակարգ գիշերօթիկ վարժարան մը պահելու։

Տեղւոյս մէջ երբ ազգային լաւ գործ մը կատարուեցաւ Աղջկանց Հայուհեաց շուրջ, որուն տեղական մասնաճիւղը, տեսչուհի տ. Իսկուհի Գարմէնի աջակցութեամբ և Թատերասիրաց օժանդակութեամբ, ներկայացում մը կազմակերպեց։ Խաղացին Շիրվանզադէի «Պատուի համար» պիէսը։ Զուտ արդիւնք գոյացաւ 1600 ղրուշ, որ Մուշի համար բաւական գոհացուցիչ արդիւնք մըն է։ Եւ սակայն մշեցին գոհ չէ Հայուհեացէն և կըսէ, թէ Հայուհեացը երԹալով խորթ աչօք կը նայի Մուշի և Տարօնոյ աշխարհի վրայ։ Այդ ընկերութիւնն այս լայնածաւալ աշխարհի մէջ ունի ընդամէնը 4 վարժարան և 1 մանկապարտէզ։ Այդ վարժարանաց ընտրութիւնը Հայուհեացը կը կատարէ ուղղակի Կ. Պոլսէն, առանց սակայն երբէք նկատի առնելու տեղական համգամանքները և պահանջքը։ Ցետոյ՝ երբ պակասութիւն դիտել կը տրուի, թէ այդ համակրելի ընկերութիւնը, որուն կրթական ծրագիրը բարեփոխութեան կը կարօտի, այս 2—3 տարուան մէջ բնաւ ձեռագործի նիւթ ղրկած չէ իր այդ վարժարանաց. այնպէս որ մշեցի աղջիկը վարժարանի 4—5 դասարանը կաւարտէ առանց կարենալու ուղիղ ասեղ բռնել և կտոր մը գանթելու շինել իր սեփական տան համար։

Մշեցին կը վճարէ նաև Հայուհեացի համար տարեկան 30 ոսկի իբր նպաստ իր մէկ վարժարանին և մանկապարտէզին համար։

Թող չցաւին թէ Միացեալը և թէ Հայուհեացը, եթէ ըսելու ըլլանք, թէ Մուշը երկուքի համար ալ ճանչցուած է իբր բոլորովին խորթ զաւակ մը...։ Թէ ինչու՝ այդ մանրամասնութեանց մէջ մենք չենք կարող մտնել։

Այսու հանդերձ՝ սա ալ պէտք է ըսել, որ եղածներուն համար ալ շնորհակալ ենք. եթէ այդ ալ չտային, մենք ինչ պիտի ընէինք...։ Մշեցի

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

—

Լուսաբանութիւն մը

Ա.

«Մշակի» խմբագրութիւնը Թիւ 55—57 երեք Թիւերու մէջ, խօսելով Կիլիկիոյ մէջ հայութեան անցուցած մտահոգիչ տագնապներուն մասին, ուշադրութիւն կը հրաւիրէ կառավարութեան անուղիղ դիտումներուն վրայ, որ պարզապէս պատրուակներ կը հնարէ Տաւրոսի կողքերուն վրայ ապաստանած ափ մը հայերը բնաջինջ ընելու։

«Մշակի» խմբագրութիւնը իրաւունք ունէր այդ ճիչը բարձրացնելու իր հեղինակաւոր էջերէն։ Միմիայն Հաջընի յաջորդական դէպքերը եթէ նկատի ունենանք, տարակոյս չի մնար արդէն կառավարութեան այդ չիլ նկատումներուն մասին, և արդար է, որ ազգը զգոյշ մնայ այս արուեստակեալ վիճակին հանդէպ։

Հաջընի մէջ պատրուակ բռնելով հասարակ յանցանքներու և գողութեանց պատճառով և զինուորութենէ խուսափիլ ուզող քանի մը անպէտ և գէթ հայութեան ընաւին օգտակար չեղող՝ սոսկական փախստականները, կառավարութիւնը չվարանեցաւ զանոնք հետապնդելու անունին տակ Հաջընի քաղաքը ամբողջ վառելու միջոցներուն առաջ ընկրկիլ։

Արտասահմանի մէջ հրատարակուող քանի մը Թերթեր, ըստ սովորութեան ու հաւատարիմ խօսքի հերոսութեան իրենց սկզբունքին, Հաջընի տխուր դէպքը (փախստականաց սպանութիւնը) չվարանեցան իրենք ալ շահագործել փքուռոյց բառերով, առանց գիտնալու ոչ իրերն և ոչ պարագաները։ Ասոնցմէ մէկը, նշանաւոր իր յեղյեղուկութեամբը, նոյնիսկ խուժանավարի մը վայել իր գրգռութիւններովը, գրեց, որ ցորչափ անոնք—այսինքն հաջընցի «գիտակիցները»—կրակ չտան այրելու տուներն ու տեղերը «անզգամ», «դաւաճան» հաջընցիներուն, համբոյրին կարեկցութեան պիտի չարժանանան այլևս։

Ինչպէ՞ս ալ դիւրին է եղեր ձրի ժողովրդականութիւն վաստկիլ... այսպէս ոգիով մը։ Ընթերցողը ինչպէս պիտի կրնայ ըսուածները հակակշիռի տակ առնել, արդարև։

Եւ որովհետև «Մշակն» ալ խաբուեցաւ այդ առթիւ ճշմարտութիւնը՝ նկատումներէ տարուած՝ չխեղաթիւրելուն համար, և որովհետև հաջընցիք, ընդհանրապէս վեր առնելով, արժանի չէին՝ գէթ այս խնդրոյն մէջ՝ խուժանավարութիւնը լոկ գրգռող այդ ամբաստանութեանց, պարտք կը համարինք յայտնել, թէ բոլորովին սխալ և իրերը խակութեամբ չճանչնալով եղած են այդ յայտարարութիւնքը։

Հաջընի փախստականները, բաղկացած քանի մը հասարակ գողութիւններ կատարողներէ, որոնք ազատութիւնը, իսլամ աւազակաց նման, այդ կարգի գործեր անպատիժ կատարելուն մէջ կը կարծէին, ու քանի մըն ալ զինուորութենէ փախչողներէ—պարզուկ և միամիտ երիտասարդք—չէին եւ չեն ալ կրնար ըլլալ գաղափարի այն մարտիկները, որպիսին բռնազբօսիկօրէն ցուցնել ուզեցին ոմանք, պարզապէս անոր համար, որ անոնք Թիւրք կառավարութեան չիլ, միակողմանի և պատրուակ փնտռող քաղաքականութեան զոհ եղան։

Եթէ արդարև կառավարութիւնը անկեղծօրէն չարագործներ և կամ փախստականներ փնտռող մըն էր, հաջընցի այդ քանի մը խեղճ ու կրակ—ու աւելի իրենց ազգականներուն պատուհաս եղող—երիտասարդներէն աւելի, հազարաւորները, իսլամներուն մէջ պիտի գտնէր, որոնք արիւնոտ ձեռքերով, որքան արիւնախում բնազդներով, ամբողջ երկիրը անապահովութեան, գողութեանց և սպանութեանց Թատր մը դարձուցած են։ Ան, քանի մը հայ զինուորականաց փախուստէն հետու, հարիւր հազարաւոր իսլամ զինուորական փախստականներ պիտի գտնէր և որոնց համար խնդիր չըրաւ, զի... խնդիրը ոչ աւազակաց և ոչ ալ զինուորական փախստականներու վրայ էր։

Կը կրկնեմ, որ սպաննուած այդ երիտասարդները գաղափարի հերոսներ չէին, ինչ որ սակայն ոչ նուազ ցաւալի կը դարձնէ իրենց վաղաժամ մահը։ Անոնք իրենց յամառութեան և Թերևս տեղական հակառակութեանց զոհ գացին։

«Տեղական հակառակութիւն» խօսքը սխալ չհասկցուի։ Խնդիրը ոչ մասնաւորութեան և ոչ ալ դաւաճանութեան վրայ է։ Անցեալ գարնան, երբ կառավարութիւնը նորէն անոնց գոյութիւնը պատճառ բռնելով կը նեղէր հաջընցիք, տեղացիքը գլխինէն հեռացնելու համար զանոնք ամէն միջոցի դիմեցին։ Ա) Կաթողիկոսը խոստում տուաւ, որ եթէ յանձնուէին, անոնց ներումը ձեռք բերէ և դատական հոգերը ստանձնէ. մտիկ չըրին։ Բ) Տեղացիքը բաւական դրամ հաւաքելով անոնց յանձնեցին, որ գոնէ հեռանան երկրէն։ Առին դրամը և Եգիպտոս գացին. հոն երբ այլեւս դրամը հատնիլ սկսաւ և հարկ եղաւ աշխատիլ, ծրիակերութեան վարժուած այդ երիտասարդները՝ հաւանօրէն քաջալերուած հաջընցի պաշտպաններէ՝ նորէն ետ եկան և անկէ վերջ արձակ համարձակ ասկէ անկէ դրամ պահանջելով սկսան ապրիլ։

Ա՛լ որքան ջանք եղաւ զիրենք հեռացնել, անօգուտ դարձաւ։ «Մշակի» ընթերցողները կրնան յիշել մեր մէկ թղթակցութիւնը այդ առթիւ, որուն մէջ յիշած էի, թէ ինչպէս վեհափառն ևս, սրտմտած՝ այդ երիտասարդները անձնական վրէժխնդրութեանց գործածող և երկիրը վրդովեցնող անձանց դէմ, Հաջընի մէջ եկեղեցւոյ բեմէն անիծեց զանոնք, որ կը քաջալերեն այդ միամիտ երիտասարդները, դառնալով պատճառ անոնց դէշութեանց և օր մըն ալ անոնց կորստեան։ Ինչպէս որ եղաւ։

Իսկ ասոնց մէջ «Ջին Թորոս» կոչուածը, որուն անունը այնքան շահագործուեցաւ, ողորմելի մտայնութեամբ մը զոհ եղաւ իր դէշ հակումներուն, ծուլութեան և անափառութեան։

Այս անձը ոստիկան մըն էր և, Ադանայի կոտորածներուն Կարս-բազար գտնուելով, առաջինը կիմանայ՝ իր Թիւրք ընկերակիցներուն շարժ ու ձևէն՝ սպառնացող վտանգը և իմաց կուտայ կարսեցոց, որ պատրաստ մնան։

Ես այնպէս կը կարծեմ, թէ ով ոք ալ ըլլար իր տեղը, այդպէս պիտի վարուէր, ու չմոռնալով հանդերձ իր այդ ժեստը, պէտք չէր չափազանցութեան տանիլ։ Եթէ կարսեցիք բաւական խելք և նախատեսութիւն չունենային—միակ ազդակները իրենց չջարդուելուն—մինչև Սիսէն հրաման գալը՝ ինքզինքնին պաշտպանելու, Ջին-Թորոսներու նախազգուշութիւնը ինչ՞ պիտի ծառայէր։

Այս անձը վերջին ժամանակներս Հաջընի մէջ պարապ կանգնէր և, ինչպէս ամէն պարապ մարդ, աղէկ համբաւ մը չէր ձգած։ Մենք մեռածի մը համար աւելորդ մանրամասնութեանց մէջ մտնել չենք ուզեր, բայց ցուցնելու համար, թէ որքան անուղղամտօրէն կը շահագործուին եղելութիւնքը, ըսեմ թէ Ջին-Թորոսը փախստական ըլլալու համար ոչ զինուորցու էր եւ ոչ ալ դատարանէ հետապնդուած մը, այլ վերջին առենները ինքնաբերաբար անոնց գացած միացած էր, լոկ հանգիստ, անաշխատ և էֆէնտիաբար ապրելու համար։ Եւ ուրիշ ոչինչ։ Գեղեցիկ, նուիրական գաղափարէ տարուիլը այնքան հեռու էր անկէ, որքան ուղիղ դատողութիւնը մեր կարգ մը պատեհապաշտ խմբագիրներէ։

Այդ փախստականները, որքան օրը կը ներէր, կրցան պատսպարուիլ դուրսերը, ուր, բնական է թէ, կրնային պաշտպանուիլ, բայց ձմեռն հետ ստիպուեցան քաղաք ապաստանիլ, ուր եւ ոչ իսկ զգուշաւորութիւն մը ի գործ կը դնէին ինքզինքնին պահելու։

Նոր-Տարիին առաջնորդարանի հանդէսին մէջ զինուած իրենք ալ ներկայացման կուգին ներկայ գտնուիլ, որուն, բնականաբար, առաջնորդը չէր կրնար հանդուրժել։

Ոստիկանապետին ներկայութեան առաջնորդարան կուգան և առաջնորդէն դրամ կը պահանջեն, որուն վրայ յուզուած՝ առաջնորդը կաթուած կիջեցնէ։

Իրենց դրամ տալ չուզող բողոքականներէն Քէրթմէնեաններուն 4—5 ձիերը դաշտ առաջ տանելով կը մորթեն։

Վերջապէս բնական է, թէ այս կարգի յանդուգն, անիմաստ և անխոհեմ վարմունք մը—զուրկ որեւէ իդէալէ—համակրանք մը առաջ չբերէր իրենց մասին։ Միթէ իդէալի ծառայողները ինքզինքնուն թոյլ պիտի տային ժողովրդեան վիզին հեծնելով անոր վտանգուելուն պատճառ դառնալ…

Տեղական հակառակութեանց մէջ, այդ փախստականներով իրենց դէմքը հարուածելու սոր քաղաքականութիւնը եւ ոչ նուազ դեր խաղացած է յիշեալներուն անմիտ յամառումին մէջ, և ասոնք ալ փախստականաց չուզողները չէին կրնար ըլլալ, որքան բարեկամ համարուածները՝ նման զիրենք յետ մահու շահագործ-փառաբանողներուն։

Այդ տգէտ փախստականները ասոնց իսկ և իրենց պորտաբուծութեան զոհ գացին և ուրիշ ոչ ոքի։ Հաջընի մեծամեծքը որքան ալ թերութիւններ ունենան, այս պարագային մէջ անարդարութիւն պիտի ըլլար զիրենք ամբաստանելը։

Եւ չէ՞ որ անոնց ձրի փառաբանողներն ալ կը գրեն ու կը խոստովանին, թէ դեռ անոնց սպանութեան նախորդ գիշերը բոլորն ալ, նոյն իսկ ոստիկանութիւնը, կաղաչէին որ փախչին իրենց ապաստանատեղիէն, և անոնք կը յամառին ու կը մնան։

Ո՛չ, եթէ անիրաւութիւն մը կայ այս տխուր գործին մէջ, նախ գլխաւորը կառավարութեանը կը պատկանի, որ երբէք չընչին պատրուակներէ մեծ խնդիրներ ստեղծելէ չէ դադրած Տաւրոսի հայութիւնը նեղելու և բնաջնջելու համար, այլ ոչ թէ որովհետև այդ մեռեալքը հանրօգուտ և գաղափարական անձեր էին, որոնց առաջնորդը և իր ցաւակիցները մատնած ըլլան։

Այսպէ՞ս պէտք է քաջալերել այդ դժուարին տեղերը առաջնորդելու կոչուողները։ Եթէ Սարաճեան վարդապետը պահպանողական մը համարինք, կարմիր տեսակէն իսկ ըլլար, ըսէք, ինչ պէտք էր ընէր։

Արդար ըլլանք գոնէ։ Մամուլին պարտքը գէշին՝ գէշ, աղէկին՝ աղէկ ըսելն է, այլ ոչ թէ խուժանավարութեամբ միտքերը մոլորել։

Հաջընցոց արժէքը—եթէ արժէք մը պէտք է փնտռել անպատճառ—անպատակ փախստականներու այդ տխուր խնդրոյն մէջ պէտք չէ փնտռել, որուն համար ոչ ոք իրենց չափ ցաւ կը զգայ, ինչպէս որ ոչ ոք իրենց չափ անոնցմէ վնասուեցաւ, այլ այս վերջին դէպքին մէջ։ Այսինքն, ոստիկանաց խռովութիւն մը հանելու ծանօթ դէպքին մէջ, յորում հաջընցիք, մեծէն փոքր, առանց յարանուանութեան, հանրային սաոյգ, մտածուած և մեքենայուած փորձավտանգին դէմ կրցան երևան բերել։ Իրենց արժէքը հաւաքական իրենց ազգասիրութեան և անպաստ դիրքին—որ հեռու է նոյնանալէ Ուլնիոյ հետ—իրենց ինքնապաշտպանութեան և պատուախնդրութեան գեղեցիկ արտայայտութեան մէջ պէտք է փնտռել, հեռու գծուած նկատումներէ։

Հասարակաց թշնամին, որ որոգայթ լարած անոնց կը նայի, հանդէպ հայութեան իրեն լաւագոյն զօրավիգը պիտի չկրնար գտնել, քան այն խեղաթիւրիչները, որոնք ճշմարտութիւնը և արդարութիւնը մոլորեցնելով—որովհետև հայու համար և անունով կըլլան եղեր—կը կարծեն մեր դժբաղդ ազգին օգուտ մը մատուցանել։

Թշնամինիս կը ճանչնանք։ Գէթ Աստուած մեզ այդ կարգի պատեհապաշտ բարեկամներէ ազատէ։

Դիտող

Ադանա, 17 ապրիլ

ԲԱԼԿԱՆԵԱՆ ՏԱԳՆԱՊԸ

ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐՋԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մայիսի

Սոֆիա.—Քաղաքական շրջաններում կարծում են, որ բալկանեան միութիւնը գտնւում է սուր ճգնաժամի մէջ։ Բուլղարիան վերջ ի վերջոյ ստիպուած է լինելու սեպարատ հաշտութիւն կնքել, եթէ տեսնէ, որ Սերբիան և Յունաստանը ձգձգում են պայմանագրի ստորագրութիւնը։ Մակեդոնիայի երկիրները բաժանելու հարցով զբաղվող մասնաժողովը ոչ մի վճռի չէ յանգել խիստ տարաձայնութիւնների պատճառով։

—

Վիէննա.—«Միլիտէրիշէ-Րունդշաու» հաղորդում է, որ մայիսի 2-ին աւստրիական վեց հեծեալ պահակ զինուոր մի օֆիցէրի հետ Գորկովացից ուղարկվեց հետախուզումների համար Ինագօրա լեռը։ Հաւանօրէն վատ եղանակի պատճառով պահակախումբը ճանապարհը մոլորեց, ընկաւ չերնօգորական հողը և չերնօգորցի պահակախմբի գերի ընկաւ։ Չերնօգորական կառավարութեան կարգադրութեամբ պահակախումբը միևնոյն օրնևեթ ազատ արձակվեց և իր զէնքով վերադարձաւ Գորկովաց։

ԱԼԲԱՆԱԿԱՆ ՀԱՐՑԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մայիսի

Հռոմ.—Ստեֆանին հաղորդում են Սկիւտարից, որ միջազգային մասնաժողովը կազմակերպեց ժամանակաւոր ինքնավարական խորհուրդ, որի մէջ նա սկզբունքով թողել է ալբան քրիստոնեաների և մահմեդականների նախկին կազմը հաւասար թւով։ Միջոցներ են ձեռք առնված քաղաքը լուսաւորելու և հեռագրական ծառայութիւնը կանոնաւորելու։ Հեռագիրը գտնվում է հինգ ազգութիւնների օֆիցէրների հսկողութեան տակ։ Իտալական ծովային մի օֆիցէր յանձնարարված է ներկայ գտնվել քաղաքային խորհրդի նիստերին։ Սանիտարական մասնաժողովը հոգում է քաղաքի առողջապահական պայմանները բարելաւելու մասին։ Մթերքների գործը նոյնպէս կարգաւորված է։

—

Լոնդոն.—Րէյտերը հաղորդում է, որ այսօր դեսպանաժողովի նիստում քննուելու է Ալբանիայի կազմակերպութեան խնդիրը։ Հնարաւոր է, որ դեսպանները խորհրդակցեն նաև դաշնակիցների վերջին առաջարկութիւնների՝ նախնական հաշտութեան պայմանները փոխելու մասին։

Րէյտերի տեղեկութիւնների համաձայն, կայացել է բալկանեան միսիաների ներկայացուցիչների խորհրդակցութիւնը նախնական հաշտութեան պայմանագիրը ստորագրելու մասին։

—

Վիէննա.—Ներկայացնելով պալատին ժամանակաւոր բիւջէն, մինիստր-նախագահ կոմս Շտիւրկը ի միջի այլոց խօսեց արտաքին քաղաքականութեան մասին և մատնանշեց, որ բալկանեան հարցում Աւստրո-Ունգարիան հետևեց բալկանեան պետութիւնների ինքնուրոյն զարգացման վաղեմի սկզբունքին։

«Բալկանները բալկանեան ժողովուրդների համար» սկզբունքը կը ծառայէ յօգուտ բոլոր բալկանեան ժողովուրդների, նաև ալբան տարրի. այդ մտքով Աւստրո-Ունգարիան իրան նպատակ դրեց ստեղծել անկախ Ալբանիա. արտաքին գործերի մինիստրութիւնը հոգաց, որպէսզի անկախ Ալբանիա ստեղծելու սկզբունքը ստանայ Բերլինի դաշնագիրը ստորագրած պետութիւնների սանկցիան։ Երբ Չերնօգորիան Սկիւտարի հարցում ներհակ դիրք բռնեց Եւրոպայի կամքի դիմաց, Աւստրո-Ունգարիան, յենվելով ազգաբնակութեան հայրենասիրական զգացմունքների և զօրքի անձնազոհ պատրաստակամութեան վրա, հնարաւորութիւն ստացաւ կատարել տալ իր պահանջը, որպէսզի Չերնօգորիան զիջանէ Եւրոպայի որոշումներին և յանձնէ Սկիւտարը մեծ պետութիւններին։ Ներկայումս յոյս կայ, որ շուտով բալկանեան պետութիւնները հաշտութիւն կնքեն Թիւրքիայի հետ. այն ժամանակ արտաքին գործերի մինիստրութիւնը կը հոգայ ըստ հնարաւորութեան շուտով պարզել Մերձաւոր Արևելքի կացութիւնը և դրա համապատասխան կը կրճատէ սպառազինումը հարաւ-արևելեան սահմանում։ Վերջում մինիստր նախագահը յուսաց, որ պալատը նրա բացատրութիւններից մի եզրակացութիւն կանէ, այսինքն թէ հարկաւոր է շուտափոյթ գոհացում տալ միապետութեան շահերին պատուաւոր հաշտութեան պայմանով հանդերձ»։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

7 մայիսի

Պետերբուրգ.—Թագաւոր Կայսրը բարեհաճեց կայսերական գնացքով մեկնել Բերլին պրինց Էրնստ-Աւգուստի և գերմանական կայսրի դուստր պրինցէսի Վիկտորիա Լուիզայի պսակադրութեան հանդէսին ներկայ լինելու համար։ Երեկոյեան ժամը 11-ի սկզբին Արքայական սենեակում Նորին Մեծութեանը հրաժեշտ տալու ժողովվեցին բարձրաստիճան պալատականներ, շքախմբի անձինք, զինուորական պաշտօնեաներ։ Թագաւոր Կայսրը ժամանեց Մեծ Իշխանուհիներ Օլգա Նիկոլայեվնայի և Տատիանա Նիկոլայեվնայի ուղեկցութեամբ։ Կայսրը Օգոստափառ Դուստրների հետ անցաւ բոլոր ժողովվածների առաջից, յետոյ, հրաժեշտ տալով Մեծ Իշխանուհիներին, մտաւ վագոն։ Ժամը 10 ու 30 ր. Կայսերական գնացքը շարժվեց։ Թագաւոր Կայսրին ուղեկցում են Պալատի մինիստրութեան ժամանակաւոր կառավարիչ իշխան Կօչուբէյ, պալատական կօմենդանտ Դէդիւլին, պալատի մինիստրութեան դիւանապետ Մօսօլով, զինուորական դիւանի կառավարիչ իշխան Օրլով, ֆլիգէլ-ադիւտանտներ՝ Դրենտէլն և կոմս Նիրոդ, Կայսրի մօտ նշանակված գերմանական գեն.-ադ. կոմս Դօնաշլօբիտէն։

—

Լոնդոն.—Թագաւորական գնացքը ժամը 7½-ին երեկոյեան հասաւ Վիկտորիա նաւահանգիստը։ Թագաւորական զոյգը ռազմանաւերի թնդանօթաձգութեամբ անցաւ զբօսանաւը։

—

Բեռլին.—«Նորդ-Դոյչէ-Ալգ.-Ցայտունգը», յօդուած նուիրելով բարձր հիւրերին, որոնք գալիս են Գերմանիա պրինցէսի Վիկտորիա Լուիզայի պսակադրութեանը ներկայ գտնվելու, առանձնապէս սրտագին ողջունում է Թագաւոր Կայսրի և անգլիական Թագաւորական զոյգի գալուստը, մատնանշելով, որ թէև բարձր հիւրերը ժամանում են միայն ընտանեկան հանդէսի համար, բայց և այնպէս միապետների անձնական յարաբերութիւնների մտերմութիւնը հանդիսանում է Եւրոպայի կուլտուրական մեծ ազգերի փոխադարձ զարգացման գնահատելի երաշխիք։

—

Պետերբուրգ.—Ռոմանովների Տան 300-ամեայ յոբելեանի կատարման առիթով Թագաւոր Կայսրը կը բարեհաճէ Մոսկվա մտնել այս մայիսի 24-ին։

—

Վիէննա.—Մինիստր-նախագահը յայտարարեց, որ Չեխիայում և Գալիցիայում չիրականացաւ ազգութիւնների համաձայնութիւն, ապա ընդգծեց թէ անպայման անհրաժեշտ է որոնել նորանոր եկամուտներ՝ միապետութեան ռազմի պէտքերի խոշոր ծախքերը գոցելու համար։ «Սպառազինման ծախքերը—ասաց եզրակացութեան մէջ մինիստրը,—թէպէտ և անշահաւէտ են երկրի տնտեսական շահերի համար, սակայն հանդիսանում են միանգամայն չնչին՝ համեմատած ժողովրդական տնտեսութեան բոլոր շրջանների դժբաղդ աւերումների հետ, որոնք կարող են ներկայանալ դէպի պետութեան սպառազինումը ունեցած անտարբերութեան արդիւնք»։

—

Բէլֆօր.—Մի քանի զօրամասերում ցոյցեր են տեղի ունենում երեքամեայ զինուորական ծառայութեան օրինագծի դէմ։

ԿԱԼԿԱԹԱՅԻ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 92-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԸ

Կալկաթա, 16 ապրիլի (ն. տ.)

Ապրիլի 2-ին լրացաւ Կալկաթայի միակ հայ կրթական հաստատութեան՝ Մարդասիրական ճեմարանի հիմնարկութեան 92-րդ տարին։ Մի պատկառելի հաստատութիւն, որ իր հիմնարկութեան օրից, այն է 1821 թւից գրաւել է հազարաւոր Նոր-Ջուղայեցի ուսումնածարաւ երիտասարդների մշտական ուշադրութիւնը դէպի ինքն, որոնք մանուկ հասակից երազելով և տենչալով Կալկաթայի ճեմարանի փառքին, հասակ առնելուն պէս յանձն են առել ամեն տեսակ զրկանքներ և նեղութիւններ և դիմել են դէպի այդ լուսաւոր համարված վայրը, յագեցնելու իրանց վաղուց զգացած ուսման ծարաւը։ Մեծ է եղել իր ժամանակին Մարդասիրական ճեմարանի ծառայութեան նշանակութիւնը Հնդկաստան դիմող պատանու համար։ Նա հնարաւորութիւն է տուել ամենաաղքատ և անտէրական տղային անգամ իր մայրական գիրկն ընկնելու և ճաշակ առնելու կրթութիւնից։ Նա անցեալում եթէ չէ տուել այնպիսի երիտասարդներ, որոնք հետաքրքրվէին հայ կեանքով և գրականութեամբ (բացառութեամբ մի քանիսի), գոնէ պատճառ է եղել նրանց մեծամասնութեանը չը մոռանալու իրանց մայրենի լեզուով հազիւ խօսելը և մասամբ գրել-կարդալը օտար երկնքի տակ։ Բայց չը պէտք է մոռանալ յիշել, որ արդի աշակերտութիւնը չը տեսնված հետաքրքրութիւն է ցոյց տալիս դէպի ազգն և ազգային գրականութիւնը, և յուսալի է, որ մօտ ապագայում դուրս կը գան այնպիսի երիտասարդներ, որ իրանց ամբողջ կեանքում հաւատարիմ կը մնան իրանց ազգին։

Ըստ դպրոցական արձանագրութեան՝ Մարդասիրական ճեմարանը կառուցվել է 1821 թւին Աստուածատուր Մուրադխանեան բարերարի 1797 թւի կտակով, այդ նպատակով թողած 8000 ռուփի գումարով, որին կցվել են և ուրիշ նուիրատուների մասնաւոր օժանդակութիւնները։ Այդ թւի ապրիլի 2-ին տեղի է ունենում հաստատութեան հանդիսաւոր բացումն և անուանվում է «Հայկեան Մարդասիրական ճեմարան»։ 1871-ին ճեմարանը միանում է Կալկաթայի համալսարանական քննութիւններին, և ի միջի այլոց գրաբարն էլ ընդունվում է որպէս երկրորդական լեզու հայ կանդիդատների համար, մի զիջում, որ մինչև այժմ պահպանվում է։ 1880-ին, անյարմարութիւնների պատճառով, ճեմարանը տեղափոխվում է արդի շինութեան մէջ, որը կարելի է ասել նոյնպէս զերծ չէ իր բազմակողմանի անյարմարութիւններից։ Արդի շինութիւնը հռչակված է որպէս անգլիացի նշանաւոր վիպասան Վիլլեամ Մէկպիս Թակրէի ծննդավայրը։

Ըստ վաղեմի, բայց շատ անգամ զանց առնված սովորութեան, այս տարի, ապրիլի 2-ին, ճեմարանիս հոգաբարձութիւնը ձեռնարկեց տօնելու այդ վսեմ հաստատութեան 92-ամեակը։ Հանդէսին կցվեց և դպրոցական պարգևաբաշխութիւնը, քննութիւնների արդիւնքների համաձայն։ Հանդէսը տեղի ունեցաւ ճեմարանի ընդարձակ սրահում, ներկայութեամբ տեղիս հաստատութիւնը յարգող հայ հասարակութեան։ Հանդէսը բացվեց «Մեր հայրենիքով», որին հետևեցին հայերէն և անգլիերէն արտասանութիւններ, նոյնպէս կարդացվեց ճեմարանի համառօտ պատմութիւնը հայերէն լեզուով։ Ապա աշակերտներից մի քանիսը ներկայացրին Շէքսպիրի «Վենետիկի վաճառական» դրամայի չորրորդ գործողութիւնը, անգլ. լեզուով, որ բաւական աջող անցաւ և արժանացաւ ժողովրդի բուռն ծափահարութեան։ Սրան հետևեցին դարձեալ արտասանութիւններ և հայերէն երգեր։ Այնուհետև կարդացվեց անգլիերէն լեզուով ճեմարանի 1912 թւի տեղեկագիրը, որից յետոյ հանդէսի նախագահը, Կալկաթայի անգլիացիների աւագ-սարկաւագը կատարեց պարգևաբաշխութիւնը, ապա բանախօսութիւն արեց ի պատասխան տեղեկագրում իրան յայտնված շնորհակալութեան։ Ի միջի այլոց խօսեց հնդկահայերի անցեալ փառաւոր պատմութիւնից, մատնանիշ անելով նրանց մատուցած ծառայութիւնը անգլիական կառավարութեանը, և թէ, ինչպէս են նրանք մինչև այժմ պահպանել իրանց ազգայնութիւնը Հնդկաստանում, որը նրան հիացմունք էր պատճառում։ Բանախօսութիւնից յետոյ երգվեց հայկական օրհներգը, որից յետոյ ժողովուրդը ցրվեց ուրախ տրամադրութեամբ։

Յ. Տէր-Գրիգորեան

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Գ. ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆԻ ՅՈԲԵԼԵԱՆԸ

Թիֆլիսի Արտիստական թատրոնում մայիսի 7-ին, երեկ. ժամը 9-ին մօտ, տեղի ունեցաւ յոբելեանական ներկայացում ի պատիւ դերասան Գ. Տէր-Դաւթեանի 40-ամեայ բեմական գործունէութեան։

Թատրոնում ներկայ էր բաւական թւով հասարակութիւն։

Առաջինը խաղացվեց յոբելեարի թարգմանած «Ամօթ ձեր աղջկութեանը» կօմէդիայի 2-րդ գործ., որի մէջ ծառայ Գրիգորի դերը կատարում էր Տէր-Դաւթեան, որի բեմի վրա երևալը առաջ բերեց բուռն ու երկար ծափահարութիւն։

Երկրորդը ներկայացվեց «Պէպօյի» 3-րդ արարուածը. առիթ եղաւ մի անգամ ևս տեսնել անման Գիքօ—Տէր-Դաւթեանին կամ աւելի ճիշդ՝ Տէր-Դաւթեան—Գիքօին։

Յիշենք նաև, որ այս արարուածը իր երկու վաստակաւոր կատարողներն էլ ունէր՝ տիկ. Վարդուհուն և Գ. Միրաղեանին, ինչպէս և Վանօ Տէր-Գրիգորեանին։ Չենք վարանում մատնանշելու, որ այս քառանուն անսամբլը «Պէպօյի» բնական ու միակ հարազատ ներկայացնողն է հանդիսանում։

Երրորդը դրվեց «Օսկան Պետրովիչը դժոխքումը» վօդևիլը, որի մէջ յոբելեարը իր խաղկան՝ Օսկանի դերումն էր։

Միջարարներին նւագում էր աշուղ Հազիրը իր խմբով։

Ուղիղ ժամը 12-ին սկսվեց յոբելեանական հանդէսը։

Բեմի վրա առաջուց կարգով նստել էին շնորհաւորելու եկած ներկայացուցիչները և պատգամաւորութիւնները։

Յոբելեարին դուրս բերեց բեմի խորքից և իր պատուաւոր տեղում նստեցրեց Շիրվանզադէն, որ, յոբելեարի պատւին լսվող ցնծագին ծափահարութիւնից յետոյ, դիմեց նրան ողջոյնի խօսքերով. «Յարգելի յոբելեար,—ասաց Շիրվանզադէն,—15 տարի առաջ այստեղ հայ հասարակութիւնը արժանավայել կերպով տօնեց ձեր բեմական գործունէութեան 25-ամեակը։ Այսօր նոյն հասարակութիւնը տօնում է դարձեալ այս թատրոնում ձեր 40-ամեայ յոբելեանը։ Դուք այսօր ևս կը լսէք շատ հաճելի խօսքեր։ Ես միայն կը կամենայի երկու խօսքով բնորոշել ձեր բեմական գործունէութիւնը։ Որպէս վկայ ու յարգող ձեր տաղանդի՝ ես առանձնապէս պէտք է շեշտեմ, որ ձեր արուեստը ինքնուրոյն է, բնածին, արդիւնք ո՛չ ինքնազարգացման, ո՛չ շկօլայի, ո՛չ էլ մանաւանդ հետևողականութեան։ Ձեր բնական ձիրքին չէ դիպել և ոչ մի շինարար ձեռք։ Թէև այդ տաղանդը այնպէս չէ փայլել, ինչպէս հարկն էր, դրա պատճառը սակայն եղել է այն, որ նա հանդէս չեկաւ աւելի մեծ, կուլտուրական բեմի վրա։ Գուցէ և այն պատճառով ևս, որ դուք ստիպված էիք ծառայել երկու տիրոջ։ Ցանկանում եմ, յարգելի յոբելեար, որ հայ բեմը այնպէս բարգաւաճի, որ հայ դերասանը հարկադրված չը լինի ծառայել երկու տէրերի։ Մաղթում եմ ձեզ երկար տարիներ»։

Ապա Սոլովեանը կարդաց յոբել. յանձնաժողովի ուղերձը, դրված գեղեցիկ պապկայի մէջ։ Ուղերձը ամփոփ մատնանշում է այն դառն պայմանները, որոնք սակայն անկարող եղան խոչընդոտ ծառայելու Տէր-Դաւթեանին սրտով ու հոգով սիրել գեղարուեստը, մայրենի բեմը։ Այնուհետև յիշելով նրա ստեղծած տիպերը, ուղերձը երկար կեանք է մաղթում ժողովրդական խաւերի զգայուն նամուսի ճիշդ արտացոլողին։ Ուղերձից յետոյ Տ. Նազարեան նուիրեց յոբելեարին յոբել. ժէտօնը և 50 ր. նուէր։

Տիկ. Մամուլեան և Ա. Նազարէթեան ուղերձ մատուցին Թիֆլ. Հայ Դրամ. Ընկերութեան կողմից։

Գ. Միրաղեան ողջունեց Թիֆլիսում մնացած հայ դերասան-դերասանուհիների կողմից։

Տ. Նազարեան կարդաց յոբել. յանձն. պատուաւոր նախագահ և հայ թատրոնի վէտէրան Գ. Չմշկեանի շնորհաւորական գիրը, որի ծննդեան 75-ամեակը զուգորդվեց այդ օրվայ յոբելեանի հետ։

Վրաց Դրամ. Ընկ. վարչութեան և խմբի կողմից ռուսերէն ողջունեց դերասան Մեսխին և նուիրեց ծաղկէ պսակ։

Ա. Քալանթար ողջունեց «Մշակի» կողմից։

Տ. Նազարեան՝ «Աղբիւր-Տարազի» կողմից նուիրեց «Արօրա» պիէսը։

Սէյրի շնորհաւորեց «Հօրիզոնի» և Բաթումի հայ թատերասէրների խմբի կողմից։

Գ. Միրաղեանը կարդաց հայ թատրոնի մի ուրիշ վետէրանի՝ Ամիրան Մանդինեանի (հիւանդ է) ողջոյնի նամակը յանուն յոբելեարի։

Գալստեան և Սամբօլցեան կարդացին ժողովրդ. Տան հայկական սեկցիայի ուղերձը, որոնք և հրաւիրեցին յոբելեարին պատուել իր ներկայութեամբ ժող. Տանը կայանալիք ի պատիւ իրան ներկայացումը։

Տիկ. Յարութիւնեան ողջունեց Թիֆլիսի Հայուհեաց Բ. Ընկ. կողմից։

Վալադեան խօսեց Հայ Գրողների և Հրատարակչ. Ընկերութիւնների վարչութիւնների կողմից։

Ալիխանեան ողջունեց Ներսիսեան դպրոցի և Հալաբարի հասարակական ակումբի կողմից, հրաւիրելով գալ իր ծննդավայրը՝

Հալաբար, Պէպօների այդ աշխարհը մեծարվելու խրախոյսներից:

Ողջունվեց Թատր. արհեստաւորների ընկ. կողմից:

Լ. Տէր-Յովհաննիսեանը շնորհաւորեց Թիֆլ. ժողովարանի աւագների խորհրդի կողմից ժողովարանի հինաւուրց համեստ անդամ Տէր-Դաւթեանին և տուեց խորհրդի ընծայած դրամը:

Վարդանեանը՝ Հայ Երաժշ. Ընկ. վարչութեան կողմից:

Ողջոյնի խօսքեր ասացին Յ. Տէր-Գրիգորեան և Մ. Ջմշկեան իրանց սիրելի ընկերոջը:

Ապա Ա. Նազարէթեան կարդաց Մ. Ջերազի, բժ. Ա. Բաբայեանի, Ա. Զօպանեանի, Ալ. Աբէլեանի, «Կայծ» թերթի խմբագրութեան գրութիւնները, ինչպէս և շնորհաւորական հեռագիրներ՝ Թիֆլ. քաղ. վարչութեան կողմից, ա. Սիրանոյշից և իր խմբից, Աբէլեանի խմբից, դերասաններ Գլազոլինից և Սևումեանից, դերասանուհի Իզաբելլա Քալանթարից, Կ. Հ. Բ. Ընկ. խորհրդից, Բագուի Մարդասիրական և Կուլտ. Ընկ. վարչութիւններից, Ախալցխայի Բար. Ընկ. ճիւղից, Սուրամի դպրոցի, հոգաբար., ուսուցչ. և հասարակութեան կողմից, Վերին-Ագուլիսի Բար. Ընկ. ճիւղից, Ալէքսանդրօպոլի ակումբի աւագների խորհրդից, «Баку» և «Թատրոն ու Երաժշտ.» թերթերի խմբագրութիւնների կողմից, հանգուցեալ Գ. Ն. Սունդուկեանի զաւակներից, Աստրախանի Ս. քահ. Ասլանեանից, Բաթումի հայ թատերասէրներից և «Սոխակի» հրատարակիչ Գ. ա. քահ. Գրիգորեանից:

Թիֆլիսի Միջին փողոցի հայ գործակատարները նուիրաբերեցին մի մեծ ինքնաեռ (ֆրաժէ), իսկ լուսանկարիչ Բաբալեանը ընծայեց յոբելեարի նկարը մեծադիր ու շրջանակով:

Արտիստ. Ընկ. վարչութիւնը մատուցեց մեծ ծաղկեփունջ:

Բոլորից վերջը խօսեց ինքը յոբելեարը, որ ներողութիւն խնդրեց հռետորական ձիրքից զուրկ լինելուն համար: Նա նախ ջերմ ու անկեղծ շնորհակալութիւն յայտնեց յոբելեանի նախաձեռնող եղած Տ. Նազարեանին, նրա հետ աշխատած յոբել. յանձնաժողովի անդամներին, դերասան-ընկերներին:

Դիմելով հասարակութեանը, Տէր-Դաւթեանը ընդհատ ծիծաղի մէջ յայտնում է. «Ուզում եմ ձեզ շատ բան ասել, համա վուր չեմ կարողանում: Երբ տօնվում էր իմ 25-ամեայ յոբելեանը, ես դեռ այն ժամանակ շշկլված մնացի»: Վերջին 15 տարում, ինչպէս յոբելեարը ասաց, նա հանդէս է եկել 318 անգամ և մեծ մասամբ ծառայի դերերում, որպիսի հանգամանքին և նա վերագրում է իր համեստ բնաւորութիւնը: «Ես էս բեմի վրա,—շարունակում է ժողովրդի սիրելի կօմիկը,—շատ անգամ իմ նշնվել ու պսակվել, համա բարեբաղդաբար կինքում ըսկի էլ չեմ պսակվել»... (Ուրախ ծիծաղ): Վերջում Տէր-Դաւթեան յոյս յայտնեց, որ հանդէս կը գան իր յաջորդներ երիտասարդ բեմական ոյժերից, և սրտագին բաղձանք արտայայտեց, որ շուտով ինքը իբրև հանդիսատես իր կեանքի վերջալոյսի օրերում նստած լինի սեփական հայ թատրօնի մէջ...

Վարագոյրը իջաւ նրանից յետոյ, երբ յոբելեարը իր անպաճոյճ բառերով յայտնեց իր անսահման շնորհակալութիւնը, ցանկանալով բոլորին և ամեն մինին 1) առողջութիւն, 2) երկար կեանք և 3) գործի աջողութիւն... Ես.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ «Зак. Рѣчь»-ի երէկվայ համարում գրված է. «Կովկասի փոխարքայ կոմս Ի. Ի. Վօրօնցօվ-Դաշկօվը, տեղեկանալով պօլիտեխնիկումի կառուցման գլխաւոր կօմիտէի վերջին նիստի հետևանքների մասին և հաւանութիւն տալով ժողովի փոքրամասնութեան կարծիքին, անհրաժեշտ գտաւ մինչև պօլիտեխնիկումի համար այսուհետև վերջնականապէս տեղ ընտրելը՝ ընտրել առանձին միջվարչական մասնաժողով, որպէսզի սա մօտիկ ապագայում բազմակողմանի կերպով ծանօթանայ պօլիտեխնիկումը Նաւթլուղում և Սաբուրթալօյում կառուցանելուն վերաբերեալ նիւթերի հետ: Ընդսմին, ինչպէս մեզ հաղորդում են, կոմսը արտայայտել է իր միանգամայն որոշ ցանկութիւնը, որպէսզի մասնաժողովը պօլիտեխնիկումի տեղի հարցի քննութեան ժամանակ նկատի ունենայ գլխաւորապէս պօլիտեխնիկումի և ամբողջ երկրի շահերը, որովհետև պօլիտեխնիկումը հանդիսանում է ընդհանուր և պետական հաստատութիւն»:

◆ Վաղը, ուրբաթ, ցերեկվայ ժամը 3-ին, Վէրայի «Ֆանտազիա» այգում ի պատիւ Տէր-Դաւթեանի տրվում է բանկէտ: Ցանկացողներն այսօր պէտք է վաղօրօք վերցնեն մուտքի տոմս Գրական-Գեղարտական Սալոնից կամ Թիֆլիսի Քաղ. Վարկային Ընկերութիւնից:

◆ Թիֆլիսի նահանգական դատարանը արդարացրեց «Т. Л.»-ի խմբագիր Ալ. Քիշմիշեանին և այդ թերթի աշխատակից Ֆրանչէսկիին, որոնք մեղադրվում էին զրպարտութեան մէջ:

◆ Քաղաքային վարչութեան անդամներ Ն. Ե. և Ա. Մ. Արղութեան-Երկայնաբազուկները մի ամսով արձակուրդ են ստացել մեկնելու արտասահման:

◆ Այսօր Կարապետեանի այգում կայանալու է մեծ զբօսանք յօգուտ Մահմեդական Դրամատիկական Ընկերութեան:

◆ Ա. Դուրօվը վաղը Վրաց Ազնուականների թատրօնում դասախօսելու է ծիծաղի մասին:

◆ Շաբաթ, մայիսի 11-ին, Հասարակական ակումբում տեղի կունենայ այս սեզօնի վերջին երեկոյթը: Պրօֆ. Դուբրօվսկին կը կարդայ ռեֆերատ «Ժամանակակից անգլիական կուլտուրան» թեմայով, ապա կը լինի զրոյց ու երաժշտական բաժին:

◆ Ապրիլ ամսվայ ընթացքում Թիֆլիսում տեղի ունեցան զանազան հիւանդութեան 158 դէպքեր, որոնցից մեծ տոկոսը ընկնում է կարմրուկին:

◆ Կովկասում կազմակերպվել է մի ընկերութիւն Դաղստանի կօնսերվները Ֆրանսիա արտահանելու համար:

◆ Թիօնէթի գաւառից վերադարձաւ այն մասնաժողովը, որ մեկնել էր քաղաքային վարչութեան կողմից իշխ. Շանշիևի կալուածքի ջուրը դիտելու համար, որ կարող է պիտանի լինել Թիֆլիս բերելու համար: Մասնաժողովը այն եզրակացութեան է եկել, որ այդ ջուրը, եթէ բերվի քաղաք, կարելի է բերել ուղղակի հոսեցնելով: Ջրից վերցված է նմուշ քիմիական հետազօտութեան նպատակով: Մասնաժողովի անդամների կարծիքով՝ յիշեալ աղբիւրների ջուրը քաղաքին չի բաւականացնի:

◆ Թիֆլիսի դատաստանական պալատի դատախազ Սիլինը մեկնեց ծառայական գործերով Բագուի նահանգը:

◆ Թիֆլիսի ձիարշաւային ընկերութեան պատուաւոր անդամներ են ընտրվել գեներալ Թամամշեանը և փոխ-գնդապետ Տուսկաևը Անդրկովկասում ձիարշաւային գործի զարգացմանը նպաստելուն համար:

◆ Հայ Գրողների Ընկերութեան այսօրվայ հերթական երեկոյթին, Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում, Մ. Մատէնճեանը կը բանախօսէ Գամառ-Քաթիպայի մասին: Կը լինեն սօլօ ու դուէտ երգեր. կը նուագէ Յովհաննեան դպրոցի մանդոլինիստների խումբը: Բանախօսութիւններից յետոյ տեղի կունենան վիճաբանութիւններ: Սկիզբն է երեկոյեան ժամը 8-ին:

◆ Պետերբուրգում, արդարադատութեան մինիստրութեանը կից հաստատված արևելեան լեզուների դասընթացքներում (հայերէն, վրացերէն և թուրքերէն) քննութիւն տուին 16 հոգի, որոնք զանազան պաշտօններով ուղարկվում են Անդրկովկաս:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մայիսի 7-ին, առ. ժ. 10-ի մօտերը 29 տարեկան Իսմայիլ Զաքարի-օղլին Նոբաշէնի փողոցում զանգահարեց Թելաւեցի Իվան Ռոստոմովի զանգը. դուրս եկաւ աղախինը՝ Պէլագէա Աբրամաշվիլին: Այդ ժամանակ յիշեալ Իսմայիլը բռնեց Աբրամաշվիլիի վզից, հէնց այդտեղ դռան մէջ դանակով հարուածեց նրան կրծքից, որից յետոյ աղջիկը վազեց ներս, յետոյ պատշգամբ՝ օգնութիւն աղաղակելով, ուր ընկաւ և վախճանվեց: Ինքը Իսմայիլ-օղլին գնաց ոստիկանատուն և յայտնեց դէպքի մասին ու կալանաւորվեց: Սպանութեան պատճառը այն է, որ Պէլագէան մերժեց ապրել Իսմայիլ-օղլու հետ:

◆ Մայիսի 6-ին, երեկ. ժամը 9-ին, Կիրպիչնայա փող., 20 տարեկան Սիմէօն Կիտաշվիլին ինքնասպանութեան նպատակով խմեց նշատիրի սպիրտ: Թունաւորվածին տարան Միքայէլեան հիւանդանոցը: Նրա կեանքին վտանգ չէ սպառնում: Պատճառը տակաւին յայտնի չէ:

◆ Մայիսի 7-ին, երեկ. ժ. 7-ին, Բուսաբանական այգում զբօսնող Գէօրգ Ցիցխանաշվիլին և Թիֆլիսեցի Արշակ Կարախանեանը մի աղջկայ համար վէճի բռնվեցին, որ փոխվեց ծեծի, որի ժամանակ Կարախանեանը գրպանի դանակով վէրք հասցրեց Ցիցխանաշվիլիին ձախ թիկունքից: Ցիցխանաշվիլիին օգնութիւն հասցրին Միքայէլեան փողոցում, իսկ Կարախանեանը ձերբակալվեց:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թիֆլիս, 8 մայիսի

Թոյլ տուէք ինձ «Մշակի» միջոցով յայտնել խորին շնորհակալութիւն այն բոլոր անձերին և ընկերութիւններին, որոնք ինձ պատւեցին ապրիլի 28-ին իմ յոբելեանի առիթով: Յ. Շամշինեան

Յ. Գ.—Խնդրում եմ միւս թերթերին՝ արտատպել այս նամակը:

ԱՌ ՀԱՄԱՅՆ ԿՐԹԱՍԷՐ ԱԶԳԱՅԻՆՍ

Վանայ Երամեան վարժարանը իբր միջնակարգ հաստատութիւն (եօթնամեայ իդադի) քաջածանօթ է արդէն իր 35-ամեայ արդիւնալից կեանքովը և տուած լուրջ ու հիմնաւոր կրթութեամբ, որով ստացած է գոյութեան և իր դերը շարունակելու իրաւունքը:

1878 թուականին հիմնուած սոյն վարժարանը, ընդ ղեկավարութեամբ անոր բազմարդիւն անօրէն Համբարձում էֆ. Երամեանի, իր գոյութեան ընթացքին ամենայաջող և արդիւնաւոր կրթական հաստատութիւնը եղած է Հայաստանի մէջ: Նա իր դիրքով եղած է տիպար հաստատութիւնը ու խթանը Վանայ ազգ. վարժարաններու և զօրեղ պատուար մը օտար կրթութեան դէմ: Անոր հարիւրաւոր ընթացաւարտներն ու կիսաւարտները այսօր Վասպուրականի մէջ և այլուր աչքառու տեղ կը գրաւեն իրենց խնամեալ կրթութեամբ և գործնական կեանքի մէջ ունեցած դիրքովը: Այս արդիւնքը և վարժարանի օգտակար դերը գնահատած են Վան եկող ամեն այցելուները՝ հայ թէ օտարազգի, նաև եւրոպացիները և կառավարութեան շատ մը բարձրաստիճան պաշտօնեաները: Գնահատած են զայն նաև ազգիս հայրապետներն ու պատրիարքները իրենց գոհունակութեան և օրհնութեան կոնդակներով:

Այս վարժարանը, որ 1100 ոսկւոյ մօտ տարեկան բիւջէ ունի, այսօր անտեսական ճգնաժամ մը կանցունէ: Պատերազմի առաջ բերած ընդհանուր տնտեսական տագնապը ազդած է նաև անոր բիւջէին վրայ, և այսօր անիկա 400 ոսկի խոշոր բացի մը հանդէպ կը գտնուի, որ կը սպառնայ արդէն զայն մատնել կործանումի և մարել մի լուսատու փարոս: Այսօր երբ նիւթապէս ապահովուած ուրիշ ազգ. հաստատութիւններ ու կրթական ընկերութիւններ իսկ ազգին կոչում ընելու պէտքին առաջ կը գտնուին, Երամեանը իր սոսկ անհատական ոյժերով և սովորական միջոցներով ինչպէս պիտի փրկէ իր վարժարանը, որ ներկայիս ունի 370 աշակերտ, շատեր՝ կիսաթոշակ և ձրի և 18 կարող ուսուցիչներէ բաղկացեալ խումբ մը: Նա իրաւունք ունի հանրային խնամքին ու գուրգուրանաց առարկայ ըլլալու, որովհետև, որչափ մասնաւոր հաստատութիւն մը, այնու ամենայնիւ անոր աչազուրկ անօրէնը, ոչ միայն զայն շահադիտական ձեռնարկ մը չէ դարձուցած, այլև անօրինակ անձնազոհութեամբ վրայ տուած է մինչև անգամ իր հայրենի տունը և նոյնիսկ իր առողջութիւնը:

Բազմարդիւն կրթարանի մը այս տագնապալի կացութիւնը ներկայացնելով համայն հայ ժողովրդեան ուշադրութեան, լիայոյս կոչ կընենք անոր ամեն դասակարգերու հայրենասիրական զգացումներուն, կոչ կընենք հարուստին, վաճառականին ու արհեստաւորին, հայրենակիցներուն և տարաբնակներուն, որպէսզի փութան օգնութեան հասնիլ սոյն վարժարանին, որուն սպառնացող վտանգը աղէտ մը պիտի ըլլայ Վասպուրականի համար:

Առաջնորդ. տեղապահ Վանայ
Յովսէփ եպիսկոպոս

Վան, 22 ապրիլ

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Մեծ պետութիւնները վճռեցին դրական քայլեր անել, որպէսզի դաշնակիցները շուտով վերջ դնեն իրանց ներքին երկպառակութիւններին և ստորագրեն հաշտութեան նախնական պայմանները: Մեծ պետութիւնները հաստատ տեղեկութիւն ունեն, որ սերբ-բօլգարական միջադէպը այն աստիճան սուր կերպարանք է ստացել, որ երկիւղ կայ զինված ընդհարման:

◆ Կ. Պօլսից հեռագիր կայ, որ Աբդիւլ-Համիդը հիւանդ է: Նրա որդի Բիւրհան-Էդդինը խնդրեց մեծ վէզիրին, թոյլ տալ եւրօպական բժիշկներին՝ գալ Բէյլէր-բէյի պալատը, ուր բանտարկված է նախկին բռնակալը: Մահմուդ-Շէվքէթ-փաշան խնդիրը մերժեց: Ասում են, որ Աբդիւլ-Համիդը թունաւորվել է:

◆ Մահմուդ-Շէվքէթ-փաշան, ինչպէս հեռագրում են Կ. Պօլսից, այցելեց երկու անգամ նախկին սուլթան Աբդիւլ-Համիդին: Տեսակցութիւնը տեւեց երկու ժամից աւելի: Ոմանք ասում են, որ գործը վերաբերում է դրամաշորթութեանը: Ոմանք պնդում են, որ այցը կապ ունի վերջերս երևան հանված դաւադրութիւնների հետ, որոնց իբր մեղսակից է Աբդիւլը: Ոմանք էլ յայտնում են, թէ «Մ. և Ա.» կօմիտէն հարց է յարուցել վերականգնելու Աբդիւլ-Համիդի գահական իրաւունքները:

◆ Բեռլինի պահպանողական լրագիրները խորհուրդ են տալիս գերմանական կառավարութեանը զիջումներ անել Անգլիային, որովհետև Փոքր Ասիայում Գերմանիայի թշնամի հանդիսանում է Ռուսաստանը:

◆ Եռապետեան դաշնակցութիւնը վճռեց պաշտպանել երիտասարդ-թիւրքերի կօմիտէն ընդդէմ օպպօզիցիայի:

◆ Բ. Դուռը Գերմանիային պատուիրեց 90,000 լիրայի նոր թնդանօթներ:

◆ Հաշտութիւն կնքելուց յետոյ, Բ. Դուռը հրատարակելու է «Կարմիր գիրք», որի մէջ հասարակական կարծիքը խաղաղեցնելու համար մանրամասն բացատրելու է հաշտութիւն կնքելու և ծանր պայմաններ ընդունելու պատճառները:

◆ Թիւրք և բօլգար զօրքերի միջև կայացած զինադադարը լրանում է մայիսի 15-ին: Եթէ մինչև այդ թիւը հաշտութեան արձանագրութիւնը չը ստորագրվի, պատերազմը վերսկսվելու է նոր թափով:

◆ Թիւրք. անգլիական համաձայնութեան ոյժով Թիւրքիան ի միջի այլոց Անգլիային է թողնում հսկել կարգուկանոնի վրա Պարսկական ծոցում:

◆ Բօլգարիան Թիւրքիայի հետ հաշտութիւն կնքելուց յետոյ 600 միլիօն ֆրանկի փոխառութիւն է ստանալու Պարիզում:

◆ Բօլգարիան և Սերբիան մեծ թւով զօրքեր են կենտրօնացրել սահմանագլխին: Ամեն ժամ սպասվում է ընդհարում:

◆ Շվէյցարիայում բօլգար ուսանողները հեռագրով պատուէր ստացան հայրենիք վերադառնալ:

◆ Բ. Դուռը պատուիրագրեց Ադակալէի թիւրք նահանգապետին զիջել միմիայն ոյժի:

◆ Լուրերի համաձայն, Բեռլինում կայանալու է Ֆերդինանդ թագաւորի և մի բարձրաստիճան ռուս անձի տեսակցութիւնը, երկուստեք ծագած վերջին անհարթութիւնները չակելու համար:

◆ Շուտով Պետերբուրգ է գալու Ֆերդինանդ թագաւորը:

◆ Ռուսաստանը գաղտնի պայմանագիր է կապել Չինաստանի հետ, որով ճանաչվում է Հիւսիսային Մօնղօլիայի լիակատար աւտօնոմիան սեփական զօրք ունենալու իրաւունքով, որի հրամանատարները լինելու են անպատճառ ռուսները:

◆ Պետերբուրգի 23 օրաթերթեր բողոք յայտնեցին կառավարական օրինագծի դէմ, որ ճնշում է խօսքի ազատութիւնը:

◆ Մայիսի 1-ի 200,000 ր. տարան Մինսկում մանուֆակտուրիստ Ախսէլրօդի տամար:

◆ Գալէի բժշկական կօնգրէսում երեք պրօֆեսօր յայտնեցին, որ նոր միջոցով կարելի է բժշկել քաղցկեղ (րակ) հիւանդութիւնը առանց անդամահատութեան դիմելու: Միայն մի բժշկութեան համար անհրաժեշտ նիւթը արժէ 90,000 ֆրանկ:

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

(ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԵՌ. ԳՈՐԾ.)

7 մայիսի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Սենատը բեկեց իր կնոջը սպանելուն համար դատապարտված Պրասօլովի դատավճիռը և յանձնել գործը քննել նորից:

Գրաւվեց «Завѣты» ամսաթերթի ապրիլեան համարը:

Ճան. հաղ. մինիստրը մեկնեց հիւսիսարևմտեան երկաթուղագծի դրութեան հետ ծանօթանալու համար:

Պետերբուրգում գումարվելու է առողջաբանական 14-րդ միջազգային կօնգրէսը:

Օրէնսդրական մասնաժողովը հաւանութիւն տուեց Ղազվինում, Սօուջ-Բուլաղում և Խոյլարում փոխ-հիւպատոսարաններ բանալու և տարրական կրթութեան կարիքների համար 8 միլիօն ռուբլի յատկացնելու լրացուցիչ օրինագծերին:

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

1913 թ-ի ապրիլի 18-ից մինչև 1914 թ. ապրիլի 17-ը:

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ.—**Արագ գնացքը** № 6—10 ժ. 16 ր. առ., հասնում է Աղստաֆա 12 ժ. 34 ր., Գանձակ 3 ժ., Եւլախ 4 ժ. 31 ր., Հաջի-Կաբուլ 8 ժ. 6 ր. եր., Բագու 11 ժ. 13 ր. գիշ.: **Պօստատար գնացքը** № 4—10 ժ. 16 ր. գիշ., հասնում է Աղստաֆա 1 ժ. 6 ր. գիշ., Գանձակ 4 ժ. 16 ր. առ., Եւլախ 6 ժ. 15 ր. առ., Հաջի-Կաբուլ 10 ժ. 46 ր. առ., Բագու 3 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 8—6 ժ. 29 ր. եր., հասնում է Աղստաֆա 8 ժ. 50 ր. եր., Գանձակ 11 ժ. 23 ր. գիշ., Եւլախ 1 ժ. 1 ր. առ., Հաջի-Կաբուլ 4 ժ. 42 ր. առ., Բագու 7 ժ. 53 ր. առ.: **Խառն գնացքը** № 106 (Մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—4 ժ. 23 ր. առ., հասնում է Աղստաֆա 8 ժ. 41 ր. առ., Գանձակ 1 ժ. 7 ր. ցեր., Եւլախ 5 ժ. 19 ր. ցեր., Հաջի-Կաբուլ 12 ժ. 29 ր. գիշ., Բագու 7 ժ. 28 ր. առ.:

ԲԱԹՈՒՄ.—**Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 51 ր. առ., հասնում է Միխայլօվօ 1 ժ. 56 ր. ցեր., Բաթում 11 ժ. 8 ր. գիշ.: **Մարդատար գնացքը** № 7—4 ժամ 40 ր. ցերեկվայ, հասնում է Միխայլօվօ 8 ժ. 46 ր. եր., Բաթում 5 ժ. 40 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 9—10 ժ. 30 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 2 ժ. 31 ր. գիշ., Բաթում 10 ժ. 59 ր. առ.: **Խառն գնացքը** № 107 (մարդատարի արագութեամբ ապրանքների համար)—2 ժ. 48 ր. գիշ., հասնում է Միխայլօվօ 8 ժ. 20 ր. առաւ., Բաթում 10 ժ. 18 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ.—**Պօստատար գնացքը** № 4/3—12 ժ. 51 ր. ցեր., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 10 ր. եր., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 48 ր. գիշ., Էջմիածին 5 ժ. 12ր. գիշ., Ուլուխանլու 5 ժ. 40 ր. գիշ. (առանց Երևան մտնելու), Նախիջևան 10 ժ. 15 ր. առ., Ջուլֆա 11 ժ. 42 ր. ցեր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 24/23 (միայն II և III կարգի վագօններով)—8 ժ. 8 ր. եր., հասնում է Ղարաքիլիսա 3 ժ. 23 ր. գիշ., Ալէքսանդրօպոլ 6 ժ. 57 ր. առ., Էջմիածին 12ժ. 10 ր. ցեր., Ուլուխանլու 12 ժ. 38 ր. ցեր., Երևան 1 ժ. 33 ր. ցեր.: **Մարդատար-ապրանքատար գնացքը** № 14/13—12 ժ. 46 ր. գիշ., հասնում է Ղարաքիլիսա 8 ժ. 13 ր. առ., Ալէքսանդրօպոլ 11 ժ. 50 ր. ցեր., Կարս 4 ժ. 18 ր. ցեր.:

ԲՈՐԺՕՄ.—**Մարդատար գնացքը** № 17/18—8 ժ. 2 ր. առ., հասնում է Դօրի 10 ժ. 41 ր. առ., Բօրժօմ 9 ժ. 31 ր. ցեր.: **Մարդատար** № 19/20—3 ժ. 18 ր. ցեր., հասնում է Դօրի 5 ժ. 59 ր. ցեր., Բօրժօմ 1 ժ. 2 ր. երեկ.:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ.—**Արագ գնացքը** № 5—9 ժ. 35 ր. եր. **Պօստատար գնացքը** № 3—9 ժ. 1 ր. առ.: **Մարդատար գնացքը** № 7—3 ժ. 53 ր. ցեր.: **Խառն գնացքը** № 107—2 ժ. 12 ր. գիշ.:

ԲԱԹՈՒՄԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4—9 ժ. 16 ր. երեկ.: **Մարդատար գնացքը** № 8—5 ժ. 54 ր. ցեր.: **Մարդատար գնացքը** № 10—8 ժ. 40 ր. առ.: **Խառն գնացքը** № 106—3 ժ. 38 ր. գիշ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ.—**Պօստատար գնացքը** № 4Д./3—7 ժ. 32 ր. եր.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 26/25—(II և III կարգի վագօններով)—10 ժ. 50 ր. առ.: **Մարդ.-ապրանքատար գնացքը** № 16/15—7 ժ. 28 ր. առ.:

ԲՈՐԺՕՄԻՑ.—**Մարդատար գնացքը** № 17/18—11 ժ. 7 ր. եր.: **Մարդատար գնացքը** № 19/20—7 ժ. 38 ր. առ.:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ

Թիֆլիսի իգական գիմնազիայի IV դասարանի ԱՇԱԿԵՐՏՈՒՀԻ, պատրաստակամ է որևէ հայ ընտանիքի հետ գնալ ամարանոց, ուր կարող է պարապել կամ զբօսցել երեխաների հետ ռուսերէն լեզուից, նոյնպէս և այլ առարկաներից (մինչև IV դաս.) —առանց վարձատրութեան, փոխարէնը ստանալով միայն ճաշ և ապաստան: Հասցէն՝ Шелковниковская ул. № 9, հարցնել մանկաբարձուհի Ցիցիկեանին:

363. 1—1

ՊԵԱՏԻԳՕՐՍԿԻ հայոց եկեղեցու երգեցիկ խմբի համար հարկաւոր է

ԽՄԲԱՊԵՏ

50 ռուբլի ռոճիկ և սենեակ: Ցանկացողները կարող են դիմել Գ. Սուքիասեանցին:

(շ.կ.ե.) 368. 4—1

Մամուլի տակից լոյս տեսաւ

Յ. ԴԱՂԲԱՇԵԱՆԻ

ԱՐԵՒԵԼԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ,

ԸՆԴԱՐՁԱԿ ՆԱԽԱԲԱՆՈՎ, ՈՐԻ ՄԷՋ ԼՈՒՍԱԲԱՆՎԱԾ Է ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ ՀԱՐՑԸ:

Գինը 50 կոպ., ճանապարհածախսով և վերադիր վճարով 80 կոպ.:

Դիմել՝ А. Дагбашяну. Въ г. Тифлисъ. Коргановская ул. № 9.

367. 1—1

Չափահասների համար

ԼՈՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Բժշկ. ֆէլդշէր Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆԻ

1) «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարան» (կանանց և տղամարդկանց վեներական և այլ ցաւեր), բազմաթիւ րէցէպտներով, խորհուրդներով և նկարներով: Անհրաժեշտ բժշկարան է ամեն մի չափահաս մարդու համար, նամանաւանդ այնտեղ, որտեղ չը կան մասնագէտ բժիշկներ: Լեզուն շատ պարզ ու ամենքին հասկանալի: Գինն է 50 կ.:
2) «Տռիպէր (սուսանակ) եւ նրա բժշկութիւնը» րէցէպտներով, բազմաթիւ խորհուրդներով ու նկարներով: Գինն է 20 կ.:
3) «[illegible]», խիստ ծիծաղաշարժ վօդեվիլ միմիայն չափահասների համար: Գինը 20 կ.:
4) «Սօնայի նշանդրէքը» յայտնի վօդեվիլը, շատ ծիծաղաշարժ 2-րդ հրատարակութիւն: Գինը 15 կ.
5) «Միևնոյն դագաղում», պատմուածք հայ-թուրքական կեանքից. գլխաւորների նկարներով: Գինը 7 կ.:
6) «Մշտական զօրք եւ միլիցիա» Պիմէնովից թարգմանած: Գինը 5 կ.:

Ուղարկում եմ բոլոր գրքերը միասին: Պահանջողները պէտք է առաջուց զրկեն գրքերի գինը մարկաներով ճանապարհածախսով միասին՝ բոլոր գրքերը միասին—17 կոպ. (Ընդայման՝ զակազնոյ): Հասցէն՝ Тифлисъ, Семеновская ул. № 9. Медицинскому фельдшеру А. Г Есаянцу.

(Տ. Կ.) 44. 100—32



ՈՍԿԷ ԺԱՄԱՑՈՅՑ ԽՐՕՆՕՄԵՏՐ 56 ՊՐՕԲԻ

Փոխարէն 200 ր. արժէք. ոսկէ ժամացոյցի առաջարկում եմ միայն 4 ր. 70 կ.-ով խրօնօմետր ժամաց., որը իր ձևով և շքեղութեամբ չէ զանազանվում ոսկէ ժամացոյցերից, որովհետև ամենալաւ մասնագէտն անգամ դժուարութեամբ կը զանազանէ իսկականից: Ժամաց. կորպուսը միանգամայն տափակ է, մի բուրլանոցի հաստութեան, ամերիկ. իսկական նոր ոսկուց, որը երբէք չէ կորցնում իր նախկին տեսքը, երեսի վրա օրիգին. ծաղկանկարով (տես նկարը): Խրօնօմետր ժամաց., թէ տղամ. և թէ կանացին, աչքի է ընկնում իր ուղղընթացքով, իսկ. անկէր. 15 քարով, լարումը 40 ժամը մի անգամ: Ցանկանալով տարածել իմ ֆիրման, ես իբրև պրեմիա տալիս եմ իւրաքանչիւր ժամացոյցի հետ միասին 20 հատ արժէք. առարկ. 1) Շղթայ ամերիկ. իսկ. ոսկուց, 2) Բրելօկ-կինէմատօգրաֆ հետաքրքր. կանանց նկարներով, 3) Զամշեայ քսակ ժամաց. համար, 4) Ժամաց. գողերից պահպ. իր, 5—8) Գրպանի նէսէսէր կոչուց՝ 4 անհրաժեշտ առարկաներով, 9) Պօրտմօնէ, արտա. շինուածք 7 բաժ., 10) Կնիք պատուիրողի անուն-հօրանուն-ազգանունով, 11) Մի սրուակ նեղկ կնիքի համար, 12) Մատանի-կնիք ամերիկ. իսկ. Դուբլէ-ից, 13) Պարիզեան պլատօզը., որ ցոյց է տալիս բնականօրէն ամեն տեսար., 14—19) Պլատօզը. համար հետաքրք. 6 նկար, 20) Թատրոնական հեռադիտ. ախրօմ. 4 ապակիներով, սովորական մեծութեան, որ մօտեցնում է ամենահեռ. տարած. վրա: Այդ բոլորը միայն 4 ր. 70 կ.-ով, 2 հատը՝ 9 ր. 30 կ.: Այդ ձևի խուլ ժամաց. 5 ր. 70 կ., 2 հատը՝ 11 ր. 20 կ.: Երաշխաւոր. 6 տարով: Ուղարկ. ենք վերադիր վճ. և առ. կանխավճ.: ճանապ. 40 կ., Սիբիր՝ 75 կ.: Հասցէն՝ Складу часовъ И. ШТРУМФЕЛЬДЪ
ВАРШАВА, Электоральная 11, отд 50.

(25, 9) (В. 21654) 3—3

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный